

# Արդար և կանաչ անցում կատարելիս որոշումների ընդունմանը հանրության արդյունավետ մասնակցության ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՂԵՑՈՒՅՑ



777

Կլաուդիա Իտտորատե-Լիմա,  
Արթուր Գրիգորյան, Մելինե Ավագյան

**RAOUL  
WALLENBERG  
INSTITUTE**  
OF HUMAN RIGHTS AND HUMANITARIAN LAW

 **ECORIGHT**

**SI.** Funded by  
**Swedish  
Institute**

## Հրաժարագիր

Սույն ուղեցույցում արտահայտված կարծիքները պատկանում են հեղինակ(ներ)ին և պարտադիր չէ, որ արտահայտեն Շվեդական ինստիտուտի, Շրջակա միջավայրի, գյուղատնտեսական գիտությունների և տարածական պլանավորման շվեդական հետազոտական խորհրդի («Formas») կամ «Biodiversa+» կազմակերպության պաշտոնական տեսակետները:

Խնդրում ենք նկատի առնել, որ սույն փաստաթուղթը իրավական խորհրդատվություն կամ իրավական փաստաթղթերի պաշտոնական մեկնաբանություն չէ: Ուղեցույցի հիման վրա որևէ գործողություն նախաձեռնելուց առաջ հորդորում ենք խորհրդակցել իրավաբանի հետ: Ուղեցույցի բովանդակությունը հիմնականում ընդհանուր տեղեկատվական բնույթի է: Հեղինակները երաշխավորում են, որ ներկայացված տեղեկատվությունը ճշգրիտ է և արտացոլում է առկա իրավակարգավորիչ դաշտը: Այդուհանդերձ, իրավական բնույթի քայլեր չպետք է ձեռնարկվեն բացառապես այս ուղեցույցի հիման վրա:

Սույն փաստաթղթի ամբողջական կամ մասնակի վերարտադրումը կրթական կամ ոչ առևտրային

նպատակներով թույլատրելի է առանց հեղինակային իրավունքն ունեցողներից հատուկ թույլտվություն ստանալու՝ պայմանով, որ կատարվի պատշաճ հղում աղբյուրին: Շնորհակալ կլինենք, եթե մեզ ուղարկվի փաստաթուղթը որպես աղբյուր օգտագործած ցանկացած հրապարակման կամ նյութի օրինակը: Տեքստը պաշտպանված է «Creative Commons Attribution-NonCommercial-NoDerivatives» լիցենզայով, եթե առանձին տեղերում այլ բան նշված չէ: Նկարների հեղինակային իրավունքը նշված է նկարագրություններում:

**ISBN: 978-91-90084-05-2**

## Հեղինակներ

Դոկտոր Կլաուդիա Իտուրատե-Լիմա, Ռաուլ Վալենբերգ մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտ

Արթուր Գրիգորյան, «Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպություն

Մելինե Ավագյան, Ռաուլ Վալենբերգ մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտ

## Երախտիքի խոսք

Սույն ուղեցույցը ստեղծվել է Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտի (ՌՎԻ) և «Էկոլոգիական Իրավունք» ՀԿ-ի, ինչպես նաև *«ԵՄ-ում և Արևելյան գործընկերության երկրներում շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման մեջ հանրության արդյունավետ մասնակցություն»* ծրագրում իրենց ներդրումն ունեցած մի շարք այլ գործընկերների և մասնակիցների սերտ համագործակցության արդյունքում: Կուզեինք մեր անկեղծ երախտագիտությունը հայտնել հայաստանյան և վրաստանյան մեր գործընկեր կազմակերպություններին, որոնց փորձառության և նվիրվածության շնորհիվ հնարավոր դարձավ ուղեցույցի մշակումը:

Բարձր ենք գնահատում ՌՎԻ-ի ծրագրային աշխատակիցների՝ Լորա Միլնի, Հաննա Յոնսոնի, Նվարդ Մինասյանի և Շվեդական ինստիտուտի մեր գործընկերների նվիրված աշխատանքը: Նրանց աջակցությունը էական էր այս նախագիծն ու ուղեցույցը հաջողությամբ ավարտին հասցնելու համար:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում նաև Արևելյան գործընկերության և եվրոպական երկրների բնապահպանական ՀԿ-ների ներկայացուցիչներին, որոնք առցանց հանդիպման ժամանակ իրենց արժեքավոր ներդրումն ունեցան ինչպես ուղենիշների, այնպես էլ ընդհանուր թեմայի շուրջ քննարկումներում: Հատկապես ցանկանում ենք ընդգծել Մարգարիդա Մարտինսի (Եվրոպական բնապահպանական բյուրո), Էլլա Սկիբենկոյի (Բիզնեսի և մարդու իրավունքների ռեսուրսային կենտրոն) և Ռոբին Ռոլեսի (Եվրոպական շրջակա միջավայրի բյուրո) ավանդն այս գործում:

Ցանկանում ենք շնորհակալություն հայտնել նաև բոլոր այն անձանց, ովքեր տարբեր փուլերում իրենց լուսման են ներդրել «ԵՄ-ում և Արևելյան գործընկերության երկրներում շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման մեջ հանրության արդյունավետ մասնակցություն» ծրագրում, ներառյալ՝ Հայաստանում ծրագրի մեկնարկին և դրան հաջորդած երկու փորձագիտական հանդիպումներին (մեկը Լուսնում, մյուսը՝ առցանց) մասնակցած անձանց: Փորձագիտական հանդիպումների մասնակիցներից էին՝

Մեթյու Սքոթը (ՌՎԻ), Ռադու Մարեսը (ՌՎԻ), Մարիա Անդրեա Նարդին (ՌՎԻ և Լուսնդի համալսարան), Բրիտտա Շյոստեդտը (Լուսնդի համալսարան), Դիեգո Ֆրանչեսկո Մարինը (Եվրոպական բնապահպանական բյուրո), Ռոբին Ռոլեսը (Եվրոպական բնապահպանական բյուրո), Խուան Սամպերը (Լուսնդի համալսարան), Լինեա Նորդլանդերը (Կոպենհագենի համալսարան), Անդրես Պալասիոն (Լուսնդի համալսարան):

Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում Հայաստանի պետական հաստատությունների, տեղական ինքնակառավարման մարմինների և տարբեր համայնքների ներկայացուցիչներին՝ իրենց փորձով և գիտելիքներով մեծահոգաբար կիսվելու համար:

Այս ծրագիրը ֆինանսավորվում է Շվեդական ինստիտուտի կողմից:

## Բովանդակություն

ԵՐԱԽՏԻՔԻ ԽՈՍՔ .....	4
ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ .....	8
<b>1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ .....</b>	<b>9</b>
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	11
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ .....	16
ԻՆՉՊԵՍ ԳՈՐԾԱԾԵԼ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ.....	21
<b>2. ԱՐԴԱՐ ԿԱՆԱԶ ԱՆՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼԻՄ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ՀԱՆՔԱՀՈՒՄՔԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ .....</b>	<b>23</b>
ԿԵՆՍԱԳՈՐԾՄԱՆ ՄԿՁԲՈՒՆՔՆԵՐ .....	23
<b>3. ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻ ՀԻՄՔՈՒՄ ԸՆԿԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ .....</b>	<b>34</b>
<b>4. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՆՔԱՀՈՒՄՔԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՇՄԱԳ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ՀԱՆՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԵՎՐՈՊԱՅՈՒՄ .....</b>	<b>57</b>
4.1 ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ` ՀԱՄԱՏԵՔՄՏԻ ՄԵՋ. ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ և ԱՐԼԵԼՅԱՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՆԵՐ .....	57
4.2 ՕՐԻՆԱԿԵԼԻ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	64
ՕԳՏԱԿԱՐ ՀՂՈՒՄՆԵՐ .....	115

## Հապավումներ

- ԱՄԿ** Աշխատանքի միջազգային կազմակերպություն
- ԵՍ** Եվրոպական միություն
- ՀԿ** Հասարակական կազմակերպություն
- ՄԱԿ** Միավորված ազգերի կազմակերպություն
- ՄԱԿ-ի ԵՍԶ** ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողով  
(UNECE)
- ՇՄԱԳ** Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում
- ՌՎԻ** Ռաուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտ
- ՎՋԵԲ** Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ
- ՏՀԶԿ** Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպություն
- ՏՍՄԻՄԴ** Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր
- ՔՔԻՄԴ** Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիր
- CEDAW** Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիա
- CRMA** Կրիտիկական հանքահումքի մասին ակտ

## 1. Ներածություն

Միաժամանակ ընթացող բազմակի ճգնաժամերի պայմաններում, դրանք են՝ կլիմայի փոփոխությունը, կենսաբազմազանության կորուստն ու միջավայրի աղտոտումը, կենսական նշանակություն ունի անցում կատարել հանածո վառելիքից դեպի վերականգնվող էներգետիկայի աղբյուրներ, ինչպիսիք են՝ արևայինը, քամու և հիդրոէներգետիկան: Մա, սակայն, առաջ է բերում մարդու իրավունքների հետ կապված լուրջ մարտահրավերներ:<sup>1</sup> Ինչպես Գլոբալ հյուսիսի, այնպես էլ Գլոբալ հարավի երկրներում արդար անցում կատարելու ընթացքը անմասն չի մնացել խնդիրներից, որոնք առնչվում են հանրային մասնակցության վերաբերյալ միջազգային պարտավորությունները ներպետական օրենսդրությունների և քաղաքականության մեջ ամրագրելուն և դրանք իրականացնելուն: Կանաչ անցման համատեքստում մարդու իրավունքների խախտումներին զուտ արձագանքող (ռեակտիվ) մոտեցումներից գատ էական դերակատարում ունեն մարդու իրավունքներն ամրագրող օրենսդրությունը և քաղաքականության գործիքները, որոնցից են, օրինակ, միջավայրի վրա ազդեցության գնահատումները և որոնց առաջնահերթ գործառույթը մարդու իրավունքների զանգվածային խախտումները և անարդարությունները

---

<sup>1</sup> Heinrich Boll Stiftung, E-PAPER, “The raw materials situation in neighboring European countries: Bosnia and Herzegovina, Serbia, Georgia, Armenia”, July 2024  
[https://www.boell.de/sites/default/files/2024-10/e-paper\\_the\\_raw\\_minerals\\_situation\\_endf2.pdf](https://www.boell.de/sites/default/files/2024-10/e-paper_the_raw_minerals_situation_endf2.pdf)

կանխարգելելն է:<sup>2</sup> Մա ենթադրում է, որ ուշադրության կիզակետում պետք է լինի պետությունների պարտավորությունը՝ իրականացնելու պատշաճ համալիր գնահատում (due diligence) նախքան այնպիսի ծրագրերի հաստատումը, ինչպիսին, օրինակ, հանքարդյունահանման կամ, օրինակ, դրան սպասարկող ջրամբարի կառուցման ծրագրերն են: Դա նաև ենթադրում է, որ այդ գործընթացի ժամանակ պետք է հարգվի, պաշտպանվի և կենսագործվի հանրության մասնակցության իրավունքը՝ որպես առանձին ինքնուրույն իրավունք և որպես մաքուր, առողջ և կենսակայուն միջավայրի իրավունքի տարր:<sup>3</sup>

Սույն օրինակելի ուղեցույցը, որը բաղկացած է օրինակելի ուղենիշներից, մշակվել է «ԵՄ-ում և Արևելյան Գործընկերության երկրներում շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման մեջ հանրության արդյունավետ մասնակցություն» ծրագրի շրջանակներում:<sup>4</sup> Ուղեցույցի մշակմանը նպաստել են նաև գլխավոր հեղինակի կողմից իրականացված հետևյալ հետազոտությունները՝ «Կենսոլորտի պաշտպանների կողմից արդար և կենսակայուն

---

<sup>2</sup> Moodley, P., Shachar, M., Ituarte-Lima, C. and, Talbot, A., *Preventing Mass Human Rights Violations in the Context of the Climate Crisis*, The Prevention Project, June 2024.

<sup>3</sup> Ituarte-Lima, C., Acosta Jiménez, A., Arini, W., Scott, M., Oud, M., Sartori Reis, I., & Avagyan, M. (2025). *Just transition and human rights: RWT's submission to the UN Secretary-General's synthesis report* [Submission by the Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law]. Raoul Wallenberg Institute of Human Rights and Humanitarian Law. <https://www.ohchr.org/sites/default/files/documents/issues/ohchr-cfis/transition/subm-just-transition-hr-cso-raoul-wallenberg-institute-human-righ-n-law.pdf>

<sup>4</sup> Effective Public Participation in Environmental Decision-Making in the EU and Eastern Partnership”(Swedish Institute, reference no: 00103/2024, September 2024)

փոխակերպումների համար իրավական և կառավարման գործիքների գործածումը» և «Բնապահպան իրավապաշտպանները՝ որպես փոփոխությունների շարժիչ ուժ կլիմայի փոփոխության, կենսաբազմազանության և մշակութային ժառանգության պահպանման խաչմերուկում»:<sup>5</sup>

## Օրինակելի ուղեցույցի խնդիրները

- Գործնականում կիրառելի դարձնել մարդու իրավունքի վրա հիմնված մասնակցությունը արդար անցման գործընթացներում,
- Ամրապնդել բնապահպանական կառավարման մեջ ժողովրդավարական և մասնակցային մեխանիզմները, հատկապես՝ կանաչ անցման համար անհրաժեշտ հանքահումքի (անցումային հանքահումք) արդյունահանման ծրագրերի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) գործընթացներում,
- Խթանել ԵՄ և Արևելյան գործընկերության երկրներում իրավական և ինստիտուցիոնալ

---

<sup>5</sup> Biodiversa+ project DEFENDBIO – Biosphere defenders leveraging legal and governance tools for just sustainability transformations work supported by the Swedish Research Council for Environment, Agricultural Sciences and Spatial Planning (Formas) (2024-00900) under the BiodivNBS joint call; and (Formas) funded project Environmental Human Rights Defenders – Change Agents at the Crossroads of Climate change, Biodiversity and Cultural Conservation (2022-697 01684).

շրջանակների համահունչությունն ու  
հաշվետվողականությունը:

Արդար անցում կատարելիս միջավայրին առնչվող որոշումների կայացման գործընթացներում հանրության մասնակցության վերաբերյալ սույն **օրինակելի ուղեցույցը (ուղենիշները)** սահմանում է համապարփակ նորմատիվային շրջանակ, որի նպատակն է ապահովել, որ արդար անցումը հիմնված լինի մարդու իրավունքների, բնական միջավայրի անխախտելիության և ժողովրդավարական հաշվետվողականության վրա:

Գործի դրվելիք այս սկզբունքներն ու ուղենիշները հստակեցնում են մարդու իրավունքներին առնչվող պետական մարմինների պարտավորությունները, հատկապես նրանք, որոնք վերաբերում են բնապահպաններին, քաղաքացիական բաց տարածքներ ապահովելուն, տեղեկատվության մատչելիությանը, հանրային շահի գերակայության սահմանմանը մասնավորի նկատմամբ, հանրային մասնակցության ապահովմանը, երբ որոշումային որևէ տարբերակ դեռևս հաստատված չէ և բոլոր տարբերակները բաց են, արդարադատության հասանելիության ապահովմանը, ինչպես նաև խախտված իրավունքների դեպքում իրավական պաշտպանությանը և իրավունքների վերականգնմանը/հատուցմանը (remedy): Այս ընդհանրական բնույթի սկզբունքները գործնականում կիրառելի դարձնելու ուղղությամբ անհրաժեշտ է ձեռնարկել կոնկրետ և

իրավիճակին հարիր միջոցառումներ, որոնք հանրության մասնակցությանը հաղորդում են չափելի և բովանդակալից բնույթ որոշումների կայացման առանցքային մեխանիզմներում: Օրինակելի ուղեցույցը կենտրոնանում է կրիտիկական հանքահումքի (critical minerals) համատեքստում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացում հանրության մասնակցության վրա: Հինգ ուղղություններով ուղենիշներն ապահովում են կառուցվածքավորված մոտեցում, որը թույլ է տալիս իրավունքահենք (rights-based) մասնակցությունը ներգծել կրիտիկական հանքահումքի նախագծերի ՇՄԱԳ ողջ գործընթացի մեջ: Այս ուղենիշները համապատասխանեցնում են ընթացակարգային քայլերը, այն է՝ ծանուցում, ժամանակային գրաֆիկի կազմում, վաղ փուլում ներգրավում, կարծիքների հավաքագրում, որոշումների վրա ազդեցության մեխանիզմներ, կենսագործման սկզբունքների նորմատիվային բնույթին: Այսպիսով, ուղեցույցի նպատակն է խթանել մի գործընթաց, որում կրիտիկական հանքահումքին վերաբերող քաղաքականությունը ոչ միայն նպաստում է ածխածնի արտանետումների կրճատման նպատակներին, այլև արդար անցման հիմքում դնում է արդարությունը, մարդու իրավունքներն ու կենսակայունությունը:

Ներածությունից (Բաժին 1) հետո Բաժին 2-ը ներկայացնում է օրինակելի ուղենիշները՝ ըստ կենսագործման սկզբունքների և դրանցից յուրաքանչյուրի համառոտ բացատրության: Բաժին 3-ը ներկայացնում է միջազգային իրավական հիմքը, որում

խարսխաված են օրինակելի ուղենիշները: Մասնավորապես, հիմնվելով մարդու իրավունքների միջազգային պայմանագրերի՝ որպես «կենդանի» փաստաթղթերի մեկնաբանությունների վրա՝ ստորև ներկայացված կենսագործման սկզբունքներն ու ուղենիշները «թարգմանում» են հանրության մասնակցության վերաբերյալ արագ զարգացող իրավական կորպուսը արդար անցման համատեքստում կիրառելի կոնկրետ միջոցառումների լեզվի: Թեև միջազգային և տարածաշրջանային մարդու իրավունքների փաստաթղթերը, ինչպիսիք են՝ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների միջազգային դաշնագիրը (ՔՔԻՄԴ), Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիրը (ՏՄՄԻՄԴ), Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW), Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) թիվ 169 կոնվենցիան, Օրհուսի կոնվենցիան և բնապահպանական բազմակողմ համաձայնագրերը, դնում են հանրության՝ միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին մասնակցելու իրավունքի նորմատիվ հիմքը, կանաչ էներգետիկայի ուղղությամբ արագընթաց անցումը և կրիտիկական հանքահումքի նկատմամբ աճող կախվածությունը ստեղծում են ընթացակարգային և բովանդակային նոր մարտահրավերներ:

Արդար անցման համատեքստում սույն օրինակելի ուղեցույցը ըստ տարբեր տարածաշրջանների և ենթաթեմաների

տեղայնացնելու նպատակով Բաժին 4-ում ներկայացվում է ԵՄ-ում և Արևելյան գործընկերության երկրներում կրիտիկական հանքահումքի արդյունահանման ծրագրերի ՇՄԱԳ գործընթացներում հանրության մասնակցության համատեքստավորված վերլուծություն, որին հաջորդում են ուղենիշներից յուրաքանչյուրին նվիրված բացատրական նշումներ: Կրիտիկական հանքահումքի վերաբերյալ եվրոպական և միջազգային նոր ձևավորվող դաշտերը վերափոխում են ինչպես միջավայրի վրա ազդեցության գնահատումների ծավալը և ժամկետները, այնպես էլ այդ գործընթացներում մասնակցության իրավունքի սահմանումները: ԵՄ հասնող ապրանքային շղթաները (EU supply chains) կարող են ազդեցություն ունենալ այլ տարածաշրջաններում ժողովրդավարության, մարդու իրավունքների և իրավունքի գերակայության վրա, այդ իսկ պատճառով այս գործիքների վերլուծությունը այժմեական է միջազգայնորեն:<sup>6</sup> Կենսագործման սկզբունքները սինթեզում են այս գոյավորվող իրավական դաշտը և ամրագրում, որ բնական միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում մասնակցությունը միաժամանակ հանդիսանում է և՛ ինքնուրույն առանձին իրավունք, և՛ մաքուր,

---

<sup>6</sup> Ituarte-Lima, C., and Mares, R., 2024, 'Environmental democracy: Examining the interplay between Escazu Agreement's innovations and EU economic law', *Earth System Governance*, Vol 21, and [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2025/754480/EXPO\\_STU\(2025\)754480\\_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2025/754480/EXPO_STU(2025)754480_EN.pdf)

առողջ և կենսակայուն միջավայրի իրավունքի  
ընթացակարգային բաղադրիչ:

## Օրինակելի ուղեցույցի մշակման գործընթացը

Սույն օրինակելի ուղեցույցը կազմվել է իրավական վերլուծության դոկտորինալ մեթոդի կիրառմամբ, որը ենթադրում է իրավական փաստաթղթերի, հեղինակավոր տեքստերի և այլ իրավական աղբյուրների վերլուծություն:<sup>7</sup> Երեք հեղինակների պրակտիկ փորձառությունը՝ կապված բնապահպանական ժողովրդավարության և մասնակցային իրավունքների հետ, նույնպես անդրադարձել է փաստաթղթում տեղ գտած ուղղորդումներին: Թեև սույն օրինակելի ուղեցույցը կենտրոնանում է ԵՄ-ում և Արևելյան գործընկերության երկրներում արդար կանաչ անցման, մասնավորապես՝ կրիտիկական հանքահումքի համատեքստում հանրության մասնակցության իրավունքի վրա, ներկայացված սկզբունքներն ու ուղենիշները կիրառելի են նաև այլ տարածաշրջաններում և համատեքստերում: Դոկտորինալ վերլուծության և գործարկելի հետազոտության (action research, իրականացված մասնակցայնորեն) մեթոդների համադրումը ունի իրավունքի բովանդակությունը, իմաստը և

---

<sup>7</sup> Suzanne Egan, 'The doctrinal approach in international human rights law scholarship' in McConnell, L. and Smith, R. (2018) *Research Methods in Human Rights*. London and New York: Routledge

կիրառման ձևերը երևան հանելու մեծ ներուժ:<sup>8</sup> Օրինակելի ուղեցույցի մշակման գործընթացը եղել է բաց ու մասնակցային և ներառել է երկու միջազգային աշխատաժողով՝ կազմակերպված 2025 թվականին: Դրանցից առաջինը՝ «ԵՄ-ում և Արևելյան գործընկերության երկրներում շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման մեջ հանրության արդյունավետ մասնակցություն» խորագրով, անդրադարձել է միջավայրի վրա ազդող որոշումների կայացման գործընթացներում հանրության մասնակցության կարևոր դերին, հատկապես՝ հանքարդյունաբերության ոլորտում: Դրա ժամանակ փոխանակվել են գաղափարներ, թե ինչպես կարելի է համատեղել մարդու իրավունքների միջազգային ստանդարտների ու ԵՄ օրենսդրության կիրառությունը՝ արդար և կենսակայուն անցում ապահովելու նպատակով: Մասնակիցների ներկայացրած դիտարկումները և առաջարկությունները կարևոր էին հանրության մասնակցության վերաբերյալ սույն օրինակելի ուղենիշների մշակման համար, քանի որ դրանք ընդգծում էին, որ դրանք պետք է հաշվի առնեն հանքարդյունաբերության և արդյունահանող այլ ոլորտների սոցիալ-էկոլոգիական ազդեցության առանձնահատուկ դինամիկան: Մասնակիցների թվում էին Լուսնի համալսարանի, Կրիտիկական հանքահումքի կոալիցիայի (Critical Raw Material Coalition), Եվրոպական բնապահպանական բյուրոյի, Ռատու Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի

---

<sup>8</sup> Smith, R. (2018) *Research Methods in Human Rights*. London and New York: Routledge

ինստիտուտի և «Էկոլոգիական իրավունք» ՀԿ-ի փորձագետներ:

Երկրորդ աշխատաժողովը՝ «Հանրության մասնակցությունը շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում. Օրհուսի կոնվենցիայի կենսագործում» խորագրով, համախմբել է Արևելյան գործընկերության տարածաշրջանի և Եվրոպական միության շուրջ 50 փորձագետների և մասնագետների՝ ներառյալ հետազոտողների և իրավակիրառ մասնագետների Ռեուլ Վալենբերգի անվան մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի ինստիտուտից, Կրիտիկական հանքահումքի կոալիցիայից, Եվրոպական բնապահպանական բյուրոյից, Բիզնեսի և մարդու իրավունքների ռեսուրսային կենտրոնից, «Էկոլոգիական իրավունք» հասարակական կազմակերպությունից, ինչպես նաև Մարդու իրավունքների և շրջակա միջավայրի գլոբալ ցանցից: Քննարկման կիզակետում էին հանրության մասնակցության, մարդու իրավունքների և բնապահպանական արդարության հարցերը Օրհուսի կոնվենցիայի, ինչպես նաև թեմային առնչվող միջազգային և ՄԱԿ-ի այլ կոնվենցիաների լույսի ներքո: Աշխատաժողովի գլխավոր նպատակն էր փոխանակել միջավայրի վրա ազդող որոշումներում հանրության մասնակցության վերաբերյալ փորձի և լավագույն պրակտիկաների վերաբերյալ տեղեկատվություն, քննարկել սույն ուղեցույցի նախնական տարբերակը և ուսումնասիրել, թե ինչպես է կարելի մարդու իրավունքների միջազգային իրավական դաշտը, Օրհուսի

կոնվենցիան<sup>9</sup> և ԵՄ իրավակարգավորումները միահյուսելով ստեղծել մասնակցային գործընթացներ, որոնք կհանդիսանան արդար և կենսակայուն անցման երաշխիք:

Ի լրումն միջազգային աշխատաժողովների՝ 2024 թվականին Հայաստանում ևս երկու աշխատաժողով է անցկացվել: Դրանց անցկացման համար համայնքների ընտրությունը հիմնված էր երկու չափանիշների վրա. մեկը պետք է արդեն իսկ հանքարդյունաբերության ազդեցությունը կրող համայնք լիներ, մյուսը պետք է լիներ հանքարդյունաբերական պոտենցիալ գործունեության գոտում, որտեղ կան հանքային հաստատված պաշարներ: Համատեքստերը, որոնցում իրականացվում են հանքարդյունաբերական ծրագրերը, զգալիորեն տարբերվում են: Ըստ այդմ՝ առաջին աշխատաժողովը կազմակերպվել է Վայոց ձորի մարզի Վայք համայնքում, որի վարչական տարածքում կան հաստատված, բայց չարդյունահանվող հանքային պաշարներ: Այս տարածաշրջանում տեղի բնակչությունը պատմականորեն զբաղվում է գինեգործությամբ, զբոսաշրջությամբ և բնական միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից կենսակայուն այլ տնտեսական գործունեությամբ: Երկրորդ աշխատաժողովը կազմակերպվել է Լոռու մարզի Այրում գյուղում, որտեղ հանքարդյունաբերական գործունեություն տարվում է հնուց ի վեր, և որն արդեն իսկ կրում է բնական միջավայրի և

---

<sup>9</sup> United Nations Economic Commission for Europe (1998) Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters, տես այստեղ՝ <https://unece.org/mission>

մարդկանց առողջության վրա դրա թողած ազդեցության վնասները: Այս աշխատաժողովների նպատակը տեղում գործնական տեղեկություններ հավաքելն էր՝ խնդիրները ճիշտ գնահատելու և լուծումներ առաջարկելու համար: Հստակ էր, որ երկու համայնքներն էլ կուզեին ունենալ հանրության մասնակցության վերաբերյալ օրինակելի մի ուղեցույց, որը կներկայացներ հանրային լուսմների օրենսդրորեն ամրագրված մեխանիզմները և մարդու իրավունքների միջազգային շրջանակը:

Բացի վերոհիշյալ աշխատաժողովներից՝ սույն ուղեցույցի մշակման նպատակով հեղինակներից երկուսը մասնակցել են Հայաստանի տարբեր մարզերում կազմակերպված երկու հանրային լուսմների՝ մեկը Ջառիթափ գյուղում՝ կապված Ազատեկի ոսկու հանքավայրի շահագործման հետ, իսկ մյուսը՝ Քարաբերդ գյուղում՝ կապված ոսկու հանքավայրի երկրաբանահետախուզական աշխատանքների հետ: Այս լուսմներին մասնակցելը թույլ է տվել ականատես լինել կոնկրետ վարչական և կազմակերպչական թերացումների, ինչպես նաև արձանագրել տեղի բնակիչների մտահոգությունները, որ իրենք չունեն բավարար տեղեկատվություն հանրային լուսմներին առնչվող իրավական ընթացակարգերի և մարդու իրավունքների մասին: Բացի ՇՄԱԳ գործընթացում հանրության արդյունավետ մասնակցությանը խոչընդոտող իրավական բացերից, արձանագրվել են նաև հանրային լուսմները կազմակերպելու գործնական թերացումներ, ընդ որում՝ լուսմների

կազմակերպումը հաշվի չի առել մասնակիցների սեռային ներկայացվածության և գենդերային բնույթի հարցերը:

## Ինչպես գործածել օրինակելի ուղեցույցը

Այս ուղեցույցը/ուղենիշները կարող են օգտագործել իրավասու պետական/տեղական մարմինները, քաղաքական որոշումներ կայացնողները և քաղաքացիական հասարակությունը՝ որպես միջազգային ստանդարտներին համապատասխանող հստակ նորմատիվ և ընթացակարգային ճանապարհային քարտեզ, որը կծառայի արդար կանաչ անցման գործընթացներում հանրության բովանդակալից մասնակցության ապահովմանը: Իրավասու պետական մարմինները կարող են այն օգտագործել որպես օժանդակ գործիք հանրային լուսմների կազմակերպման ժամանակ՝ ի կատարումն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացների հետ կապված իրենց ընթացակարգային պարտավորության: Իրավատեր անձինք (right-holders), հատկապես հանրային լուսմների մասնակցող տեղի այն համայնքները, որոնք կրում են կամ կարող են կրել հանքարդյունաբերության ազդեցությունները, կարող են օգտագործել այս ուղեցույցը՝ իրենց միջազգային իրավունքով ճանաչված իրավունքների մասին տեղեկանալու և լավագույն փորձին ծանոթանալու նպատակով:

Օրինակելի ուղեցույցը/ուղենիշները կարող են ծառայել որոշումների կայացման գործընթացներում հանրության

մասնակցությանը վերաբերող իրավունքի ուժը գործի դնելուն, քանի որ այն ի մի է բերում տարբեր միջազգային փաստաթղթերում (ՔՔԻՄՂ, ՏՍՄԻՄՂ, CEDAW, ԱՄԿ թիվ 169 կոնվենցիա, Օրհուսի կոնվենցիա) ամրագրված միջազգային պարտավորությունները՝ կապված մարդու իրավունքների հետ, և վերածում է դրանք արդար կանաչ անցման գործընթացներում հանրության մասնակցության արդյունավետ և պրակտիկ ընթացակարգերի: Գիտակցելով ԵՄ դիրեկտիվները միջազգային ստանդարտներին համապատասխանեցնելու կարևորությունը՝ սույն ուղեցույցը խթանում է համահունչ և համակարգված մոտեցումներ մասնակցության և բնապահպանական վերահսկողության հարցերում, որոնց վրա պետք է հիմնեն կրիտիկական հանքահումքի արդյունահանման որոշումները՝ արդար կանաչ անցման ավելի լայն ռազմավարությունների շրջանակներում:

## 2. Արդար կանաչ անցում կատարելիս կրիտիկական հանքահումքի պատճառով միջավայրի վրա ազդող որոշումներում հանրության մասնակցության օրինակելի ուղենիշներ

### Կենսագործման սկզբունքներ

**Սկզբունք 1.** Պետական մարմիններն ապահովում են բաց քաղաքացիական տարածք, որում իրավատեր անձինք (իրավունքի կրողները)՝ անհատապես և կոլեկտիվ հիմունքներով, իրականացնում են կյանքի լավ որակի վերաբերյալ իրենց ներքին ընկալումներին համահունչ նախաձեռնություններ, իսկ արդար կանաչ անցման ծրագրերը նպաստում են քաղաքացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական, մշակութային և բնապահպանական իրավունքների իրացմանը:

**Սկզբունք 2.** Պետական մարմինները հարգում, պաշտպանում և ապահովում են էներգետիկ անցման ոլորտում բնապահպան իրավապաշտպանների իրավունքները, այդ թվում՝ նրանց կյանքի իրավունքը, արտահայտվելու և կարծիք ունենալու ազատությունը, միավորման և խաղաղ հավաքների իրավունքը՝ երաշխավորելով, որ բնապահպանները գործեն սպառնալիքներից, ահաբեկումից, ցանկացած տեսակի բռնությունից կամ օրենքի չարաշահումից զերծ միջավայրում:

**Սկզբունք 3.** Պետական մարմինները խթանում են էկոլոգիական բնույթի տեղեկատվության բովանդակալից, անհապաղ և գենդերազգայուն հասանելիությունը՝ միևնույն ժամանակ աջակցելով իրավատեր անձանց հանդես գալու տեղեկություններով՝ ընդունելով, որ այս տեսակի տեղեկատվությունը կարևոր է արդար էներգետիկ անցմանն ուղղված հավաքական գործողություններին մասնակցելու համար:

Սկզբունք 4. Էներգետիկ անցմանն առնչվող պետական լիազոր մարմինները գործում են որպես հանրային ծառայողներ՝ գերակայություն տալով ներկա և ապագա սերունդների բնապահպանական հանրային շահերին՝ դրանք վեր դասելով անդրազգային և տնտեսվարող այլ սուբյեկտների մասնավոր կորպորատիվ շահերից:

**Սկզբունք 5.** Պետությունները նպատակային միջոցներ են ձեռնարկում, այդ թվում՝ կազմակերպում են ազատ, նախապես և տեղեկացված համաձայնություն ստանալու հետ կապված գործընթացներ, որպեսզի իրավատեր անձինք, հատկապես՝ առավել խոցելի կամ լուսանցքավորված վիճակներում գտնվողները, կարողանան արդյունավետորեն մասնակցել արդար անցման շրջանակում կայացվող որոշումների ընդունման գործընթացին, երբ դեռևս որևէ որոշում ընդունված չէ, և բոլոր տարբերակները դեռևս բաց են, ինչպես նաև ունենան արդարադատության հասանելիություն

այն դեպքերում, երբ իրենց իրավունքները չեն հարգվել, պաշտպանվել կամ իրացվել:

Ստորև ներկայացված ուղենիշները այս սկզբունքները մեկնաբանում և դնում են կրիտիկական հանքահումքի համատեքստում:

## Ուղենիշներ

**Ուղենիշ Ա.** Ապահովել, որ իրավատեր բոլոր անձինք կարողանան ձեռք բերել, հասկանալ և օգտագործել կրիտիկական հանքահումքի հետ կապված բնապահպանական տեղեկատվությունը ողջամիտ ժամկետներում և ներառականորեն:

*(Կենսագործման սկզբունք 1՝ բաց քաղաքացիական տարածք և իրավունքների իրացում)*

Պետությունները պետք է երաշխավորեն բաց քաղաքացիական տարածք, որտեղ իրավատեր բոլոր սուբյեկտները՝ հատկապես բնիկ ժողովուրդները, տեղի համայնքները, կանայք և հանքարդյունաբերական շրջանների աշխատողները, կկարողանան պատշաճ ժամանակին (ողջամիտ ժամկետներում), հասանելի, անվճար և հասկանալի տեղեկատվություն ստանալ էներգետիկ անցմանն առնչվող կրիտիկական հանքահումքի ծրագրերի մասին:

Տեղեկատվության տրամադրման գործընթացները պետք է գործի դնեն տվյալ համատեքստի մշակույթին և լեզվին հարիր հաղորդակցման եղանակներ (համայնքային ժողովներ, տեղական ռադիո, թվային հարթակներ և ուղիղ շփումներ), որպեսզի պոտենցիալ ազդեցությունը կրող բնակչությունը տեղեկացված լինի մասնակցության իր իրավունքի մասին նախքան ծրագրի հաստատման կամ մերժման վերաբերյալ որևէ որոշման կայացումը, ինչպես նաև նախքան արդյունահանման կամ հետախուզման գործընթացների մեկնարկը:

Ծանուցումները պետք է հստակ ներկայացնեն այն հարցերը, որոնք ունեն մարդու իրավունքների հետ կապված հետևանքներ, այդ թվում՝

- կրիտիկական հանքահումքի ծրագրի բնույթը և նպատակը,
- որոշումների կայացման այն փուլերը, որտեղ հանրության մասնակցությունը հնարավոր է,
- կարծիք հայտնելու և պատասխան ստանալու մեխանիզմները,
- այն ձևերը, որոնցով մասնակցությունն ազդելու է վերջնական որոշումների վրա:

Թափանցիկ և ներառական տեղեկատվությունը հիմնարար նախապայման է, որպեսզի համայնքները կարողանան

ձևավորել արդար, կայուն և իրավունքները հարգող անցման վերաբերյալ իրենց տեսլականը:

**Ուղենիշ Բ.** Երաշխավորել ողջամիտ և բոլորին հասանելի ժամկետներ՝ կրիտիկական հանքահումքի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում տեղեկացված մասնակցության համար, որի ժամանակ հաշվի կառնվեն հնարավոր կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները:

*(Կենսագործման սկզբունք 3՝ տեղեկությունների պատշաճ ժամանակին (ողջամիտ ժամկետներում) և բազմակողմ հասանելիություն, ինչպես նաև ստեղծում)*

Կրիտիկական հանքահումքի արդյունահանումը և վերամշակումը հաճախ գտնվում են բարդ բնապահպանական, սոցիալական և տեխնոլոգիական տիրույթներում: Ողջամիտ և բոլորին հասանելի ժամկետների ապահովումը հնարավորություն է տալիս իրավատեր անձանց հասկանալու այս բարդությունները, քննարկելու դրանք հավաքականորեն և ներկայացնելու հիմնավորված դիրքորոշումներ:

Պետական/տեղական կառավարման մարմինները պետք է՝

- տրամադրեն բավարար ժամանակ հանրության ծանուցման և լուսմների փուլերի միջև՝ ոչ պակաս, քան 30 օր մինչև լուսմները և առնվազն 6 շաբաթ՝

հանրության դիտարկումների ներկայացման փուլերի համար,

- երկարացնեն վերջնաժամկետները, երբ ծրագրերը բարձր ռիսկեր են պարունակում էկոհամակարգերի կամ մարդկանց կենսագործունեության համար, հատկապես երբ ազդակիր կարող են դառնալ խոցելի վիճակում գտնվող մարդիկ,
- հաշվի առնեն գենդերային, մշակութային և լեզվական բազմազանությունը՝ տրամադրելով նպատակային աջակցություն, որպեսզի լուսանցքավորված խմբերը կարողանան արդյունավետ մասնակցել,
- խրախուսեն կարողությունների զարգացման միջոցառումներ, որոնք համայնքներին կօգնեն հասկանալ տեխնիկական տեղեկություններ ջրի օգտագործման, թափոնների կառավարման, աղտոտման ռիսկերի և օգուտների բաշխման վերաբերյալ, որոնք առնչվում են կրիտիկական հանքահումքի ծրագրերին:

Ողջամիտ ժամկետները հնարավորություն են տալիս, որ քննարկումները հիմնված լինեն տեղական գիտելիքի վրա և ապահովեն, որ մասնակցությունը նպաստի արդարությանը և կենսակայունությանը կրիտիկական հանքահումքի ապրանքային շղթաների կառավարման գործընթացում:

**Ուղենիշ Գ. Ապահովել մասնակցություն վաղ փուլում, երբ որևէ որոշում դեռևս կայացված չէ, և բոլոր, այդ թվում՝ մերժման, տարբերակները դեռևս բաց են, ինչպես նաև ստանալ կրիտիկական հանքահումքի պոտենցիալ ծրագրերի ազդակիր համայնքների ազատ, նախապես և տեղեկացված համաձայնությունը:**

*(Կենսագործման սկզբունք 5՝ արդյունավետ մասնակցություն և արդարադատության հասանելիություն)*

Մասնակցությունը պետք է տեղի ունենա ամենավաղ փուլերում՝ մինչև հանքային հետախուզման լիցենզիաների, արդյունահանման թույլտվությունների կամ հումքի մատակարարման պայմանագրերի հաստատումը, որպեսզի համայնքները կարողանան որոշել՝ արդյո՞ք և ինչպե՞ս են կրիտիկական հանքահումքի ծրագրերը համապատասխանում արդար անցման սկզբունքներին:

Վաղ մասնակցությունը ապահովում է, որ իրավատեր անձինք կարողանան ազդել հիմնական որոշումների վրա՝ արդյոք ընդհանրապես պե՞տք է իրականացվի արդյունահանում, թե՞ ոչ, որտե՞ղ այն պետք է իրականացվի, ի՞նչ պայմաններում, ինչպիսի՞ երաշխիքներով կամ այլընտրանքներով:

Դրան հասնելու միջոցներն են՝

- բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների ազատ, նախապես և տեղեկացված համաձայնությունը,

- միջավայրի վրա և սոցիալական ազդեցությունների վերաբերյալ տեղեկատվության անվճար հասանելիություն,
- համայնքների դիրքորոշումները վաղ փուլում փաստագրելու և հարգելու մեխանիզմներ, ներառյալ մերժումները կամ համաձայնությունը՝ որոշակի պայմաններով:

Համայնքներին վաղ փուլում ներգրավելով՝ հնարավոր է ապահովել, որ կրիտիկական հանքահումքի կառավարումը գերակայություն տա մարդու իրավունքներին, էկոհամակարգերի անխախտելիությանը և հասարակությանը երկարաժամկետ սոցիալական բարեկեցությանը՝ ի հակադրություն կարճաժամկետ տնտեսական շահերին կամ արդյունահանողների շահերին: Սա էներգետիկ անցումը խարսխում է ժողովրդավարական լեգիտիմության և սոցիալական արդարության մեջ:

**Ուղենիշ 7. Ստեղծել ապահով և թափանցիկ մեխանիզմներ կրիտիկական հանքահումքի կառավարման վերաբերյալ հանրության կարծիքի հավաքագրման, ներառման և դրան արձագանքման համար:**

*(Կենսագործման սկզբունք 2՝ բնապահպան իրավապաշտպանների պաշտպանություն)*

Հաշվի առնելով կրիտիկական հանքահումքի

արդյունահանումից հաճախ բխող կոնֆլիկտները և ռիսկերը՝ պետությունները պարտավոր են երաշխավորել ապահով, թափանցիկ և արձագանքող մասնակցային մեխանիզմներ՝ հանրային կարծիքը հավաքագրելու և այն հաշվի առնելու համար:

Իշխանությունները պետք է երաշխավորեն, որ անհատներն ու խմբերը՝ հատկապես բնապահպան իրավապաշտպանները, կարողանան ազատ և անվտանգ կերպով արտահայտել իրենց կարծիքը:

Այս գործընթացի շրջանակում իշխանությունները պետք է՝

- երաշխավորեն գրավոր և բանավոր կարծիքներ ներկայացնելու մի քանի ապահով եղանակներ, ներառյալ՝ թվային և ոչ թվային տարբերակով,
- արձանագրեն և հրապարակեն լսումների ընթացքն ու հանրությունից հնչած մեկնաբանությունները,
- ցույց տան, թե ինչպես է հանրային կարծիքը հաշվի առնվել և արտացոլվել վերջնական որոշումների մեջ,
- ապահովեն մասնակիցների պաշտպանությունը՝ ներառյալ այն պաշտպանների, ովքեր ենթարկվում են սպառնալիքների կամ ում սպառնում է քրեական հետապնդում:

Կարծիքների թափանցիկ շրջանառությունը ոչ միայն բարձրացնում է որոշումների որակը, այլև պաշտպանում է ժողովրդավարական մասնակցությունը և ուժեղացնում

հաշվետվողականությունը կրիտիկական հանքահումքի ապրանքային շղթաների կառավարման գործընթացում՝ ապահովելով, որ էներգետիկ անցումը չկրկնի պատմության մեջ նմանօրինակ դեպքերում արձանագրված բռնության, ունեզրկման կամ բացառման դրվագները:

**Ուղենիշ Ե. Ապահովել, որ կրիտիկական հանքահումքի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացները լինեն տարբեր մարմինների միջև համակարգված, իրավաբանորեն հիմնավորված և ենթակա լինեն դատական վերանայման:**

*(Կենսագործման սկզբունք 4՝ բնության պահպանության և հանրային շահի գերապատվությունը՝ մասնավոր կորպորատիվ շահին)*

Թափանցիկությունը և հաշվետվողականությունը առանցքային են, որպեսզի կրիտիկական հանքահումքի արդյունահանումը և առևտուրը նպաստեն արդար և կենսակայուն անցմանը:

Երբ որևէ ծրագրի հաստատման, փոփոխման կամ մերժման մասին որոշում է կայացվում, իշխանությունները պետք է անհապաղ հրապարակեն՝

- որոշման հիմնավորումը և դրանում տեղ գտած որևէ պայման,

- ինչպես են հաշվի առնվել հանրության մասնակցությամբ ներկայացված դիրքորոշումները,
- ինչ ձևով են վերահսկվելու և գործի դրվելու բնապահպանական և սոցիալական երաշխիքները,
- դատական ու վարչական մարմինների կողմից որոշումների վերանայման գործընթացների հասանելիությունը, որոնք իրավունքի սուբյեկտներին տալիս են որոշումները վիճարկելու իրավունք, եթե դրանք չեն արտացոլում նրանց մասնակցության կամ իրավունքների հետ կապված պարտավորությունների կատարումը:

Որոշումները պետք է հստակ ցույց տան, թե ինչպես է հանրային շահը, մարդու իրավունքները և էկոլոգիական անխախտելիությունը գերակա համարվել մասնավոր կամ անդրազգային կորպորատիվ շահերի նկատմամբ: Տեղեկությունների թափանցիկ հրապարակման և հաշվետվողականության մեխանիզմները երաշխավորում են, որ կրիտիկական հանքահումքի կառավարումը արտացոլի արդարությունը, սերունդների միջև հավասարությունը և կենսակայունությունը, որոնք իսկական արդար անցման հիմնարար արժեքներն են:

### 3. Օրինակելի ուղենիշների հիմքում ընկած միջազգային իրավունքը

Իրավունքի մեկնաբանման «կենդանի փաստաթղթի» մեթոդը ենթադրում է, որ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերը մեկնաբանվում են արդի պայմանների լույսի ներքո:<sup>10</sup> Արդար կանաչ անցման համատեքստում հանրության մասնակցությանը վերաբերող իրավական փաստաթղթերի շուրջ արագ զարգացումներ են ընթանում՝ պետական, տարածաշրջանային և միջազգային դատարանների կողմից ստեղծվող տարբեր իրավական ակտերի և դատական պրակտիկայի միջոցով:<sup>11</sup><sup>12</sup> Բացի միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության վերաբերյալ պարտավորություններ ամրագրող մի շարք կարևոր փաստաթղթերն այս ուղեցույցում ի մի բերելուց, ինչպիսին է, օրինակ, Օրհուսի կոնվենցիան,<sup>13</sup> մենք օրինակելի ուղեցույցը

<sup>10</sup> Letsas, G. (2012) *The ECHR as a Living Instrument: Its Meaning and its Legitimacy*, SSRN. see: <http://dx.doi.org/10.2139/ssrn.2021836>

<sup>11</sup> United Nations Human Rights Special Procedures (2018) Framework Principles on Human Rights and the Environment, տե՛ս <https://www.unep.org/resources/policy-and-strategy/framework-principles-human-rights-and-environment>

<sup>12</sup> United Nations Human Rights Office of the High Commissioner (2025) Environmental impact assessments, strategic environmental impact assessments and the right to a clean, healthy and sustainable environment տե՛ս <https://www.ohchr.org/en/calls-for-input/2025/environmental-impact-assessments-strategic-environmental-impact-assessments>

<sup>13</sup> UNECE, Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters”, done at Aarhus, Denmark, on 25 June 1998 <https://unece.org/environment-policy/public-participation/aarhus-convention/text>

կազմելիս հիմնվում ենք թեմայի շուրջ արդեն իսկ գոյություն ունեցող լայն իրավական կորպուսի վրա և առաջարկում ենք ուղենիշներ, թե ինչպես կարելի է այդ նորմերը կիրառել անցումային հանքահումքի համատեքստում: Հարաբերականորեն նոր եվրոպական քաղաքականությունները կանաչ էներգետիկ անցման վերաբերյալ առաջ են բերել կրիտիկական հանքահումքի վերաբերյալ նոր կարգավորումների ընդունման անհրաժեշտությունն, ինչը էապես ազդում է շրջակա միջավայրի ազդեցության գնահատման ընթացակարգերի և որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցության վրա: Հանրության մասնակցությունը միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանդիսանում է ոչ միայն առանձին ինքնուրույն իրավունք, այլև առողջ միջավայրի իրավունքի ընթացակարգային բաղադրիչը, որի շնորհիվ կենսագործելի է դառնում այդ իրավունքի բովանդակային տարրերի իրացումը, ինչպիսիք են՝ պարենի կենսակայուն արտադրությունը, կենսաբազմազանություն ունենալը և թունավորումից զերծ միջավայր ունենալը:<sup>14</sup>

Համաձայն այն սկզբունքի, որ մարդու իրավունքները պետք է առաջընթաց ապրեն և բացառվի դրանց հետընթացը, շրջակա միջավայրի, մարդու իրավունքների կամ տնտեսական որևէ

---

<sup>14</sup> Boyd, D. (2020), ‘Report of the Special Rapporteur on the Issue of Human Rights Obligations Relating to the Enjoyment of a Safe, Clean, Healthy and Sustainable Environment, UN Doc A/75/161 (15 July 2020)

իրավական փաստաթուղթ չի կարող սահմանափակել իրավունքների և երաշխիքների առավել բարենպաստ մեկնաբանությունը՝ վերաբերեն դրանք ներկային թե ապագային, այն պետության օրենսդրության մեջ, որը հանդիսանում է տվյալ փաստաթղթի կողմ, կամ որևէ այլ միջազգային համաձայնագրում, որի կողմն է տվյալ պետությունը: Հետևաբար, երբ մեկնաբանում ենք հանրության մասնակցության իրավունքը Օրհուսի կոնվենցիայի համաձայն, անհրաժեշտ է հաշվի առնել նաև այն պարտավորությունները, որոնք բխում են ՔՔԻՄՂ-ց<sup>15</sup>, ՏՍՄԻՄՂ-ից<sup>16</sup>, ինչպես նաև մարդու իրավունքների և բնապահպանության վերաբերյալ այլ համաձայնագրերից: Էներգետիկ անցման համատեքստում հանրության մասնակցության նյութական տարրը հստակեցնելու համար կարևոր է նաև դիտարկել փոխկապակցված այնպիսի գործընթացները, ինչպիսիք են՝ կլիման,<sup>17</sup> կենսաբազմազանությունը<sup>18</sup> և ջրային/օվկիանոսային համակարգերը:

Շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցությունը ներառում է թե՛

---

<sup>15</sup> International Covenant on Civil and Political Rights, 16 December 1966, into force 23 March 1976, 999 UNTS 171

<sup>16</sup> International Covenant on Economic, Social and Cultural Rights, 16 December 1966, into force 3 January 1976, 993 UNTS 3

<sup>17</sup> Savaresi, A. et al (2019) Climate Change Litigation and Human Rights: Pushing the Boundaries, 9:3, *Climate Law*, pp. 244-262.

<sup>18</sup> Futhazar, G., Maljean-Dubois, S., Razzaque, J. (2022) Biodiversity Litigation: Review of Trends and Challenges in Futhazar, G., Maljean-Dubois, S., Razzaque, J. (eds), *Biodiversity Litigation*, London, UK: Oxford University Press, pp. 359-400

անհատական, և թե՛ կոլեկտիվ չափումներ: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի (ՔՔԻՄԴ) 19-րդ հոդվածում ճանաչված՝ ազատ արտահայտվելու և կարծիքի ազատության իրավունքը ավելին է, քան պետական մարմինների և տնտեսվարողների տիրապետության տակ գտնվող տեղեկատվությանը պարզապես հասանելիություն ունենալը: Այն ընդգրկում է ավելի լայն՝ «ձայն ունենալու իրավունք»-ը, որը տալիս է տեղեկատվության փոխանակման հնարավորություն, ինչը, իր հերթին, խթանում է իրազեկ և գիտակցված մասնակցությունը իրավական և քաղաքական գործընթացներին: «Ոչ ոք չպետք է դուրս թողնվի» սկզբունքը հնարավոր է իրականացնել միայն այն դեպքում, երբ տեղեկատվության հասանելիությունը, ինչպես նաև բնապահպանական իրավապաշտպանների/կենսոլորտի պաշտպանների,<sup>19</sup> կանանց, երիտասարդների և լուսանցքավորված այլ խմբերի ձայները ոչ միայն ճանաչվում են, այլ նաև ակտիվորեն լսելի են լինում, և նրանք կարողանում են մասնակցել արդյունավետորեն:<sup>20</sup>

Պետության՝ մարդու իրավունքների վերաբերյալ պարտավորությունները հանրության մասնակցության

---

<sup>19</sup> C. Ituarte-Lima, et al., ‘Just Pathways to Sustainability: From Environmental Human Rights Defenders to Biosphere Defenders’ *Environmental Policy and Law*, Vol 53, No 5-6, 2023, pp. 347–366.

<sup>20</sup> Khan, I. (2023), Sustainable development and freedom of expression: why voice matters – Report of the Special Rapporteur on the promotion and protection of the right to freedom of opinion and expression, A/HRC/53/25, (19 April 2023) հասանելի՝ <https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/ahrc5325-sustainable-development-and-freedom-expression-why-voice.html> (accessed on 16 October, 2023)

համատեքստում հաճախ միայն կապվում են քաղաքացիական և քաղաքական իրավունքների հետ, ինչպիսիք են՝ ազատ արտահայտվելու և կարծիքի ազատության, խաղաղ հավաքների և միավորումների ազատության իրավունքները: Մակայն համաձայն *pro persona* (հոգուտ անձի) սկզբունքի՝ պետության պարտավորությունները միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում պետք է մեկնաբանվեն լայն շրջանակով՝ ընդգրկելով մարդու իրավունքների մի շարք փոխկապակցված ոլորտներ: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակը, հաղթահարելով «քաղաքացիական և քաղաքական իրավունքների» և «տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների» սահմանափակող տարանջատումը, ընդունում է, որ այդ իրավունքները փոխկապակցված և անբաժան են, և հենց այդ պատճառով էլ ավելի ու ավելի հաճախ կիրառվում է «քաղաքացիական, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական իրավունքներ» ձևակերպումը:<sup>21</sup> Օրինակ՝ կլիմայի, կենսաբազմազանության և միջավայրի աղտոտման վերաբերյալ իրագեկումը հնարավորություն է տալիս լայն հանրությանը և շահագրգիռ հանրությանը մասնակցելու քաղաքական գործընթացներին և իրացնելու ազատ արտահայտվելու և կարծիքի ազատության իրենց իրավունքները՝ կենսաբազմազանության և էկոհամակարգերի

---

<sup>21</sup> Parr 3, OHCHR (n/d) ‘Key concepts on ESCRs - Are economic, social and cultural rights fundamentally different from civil and political rights?’; հասանելի՝ <https://www.ohchr.org/en/human-rights/economic-social-cultural-rights/escr-vs-civil-political-rights>

պահպանման, ինչպես նաև բնապահպանական խնդիրները իրազեկ պայմաններում լուծելու ուղղությամբ:<sup>22</sup>

Ընթացակարգային իրավունքները, ներառյալ հանրության մասնակցության իրավունքը, փոխկապակցված են տնտեսական, սոցիալական, մշակութային և բնապահպանական իրավունքների հետ, քանի որ հենց այդ իրավունքների արդյունավետ իրացումն է դրդում, որ տարբեր խմբեր մասնակցեն ու ներգրավվեն որոշումների կայացման գործընթացներում: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին ՄԱԿ-ի դաշնագիրը,<sup>23</sup> մասնավորապես՝ Դաշնագրի 12-րդ հոդվածի 2-ի (բ) կետը, պարտավորեցնում է պետություններին ապահովել, որ օդի, ջրի և հողի որակը, ինչպես նաև աշխատավայրի պայմանները համապատասխանեն առողջության և անվտանգության պահպանման չափանիշներին: Պետությունները պետք է կանխեն և օրենսդրորեն կարգավորեն թունավոր նյութերի, վտանգավոր թափոնների, աղտոտման, աղմուկի և այլ էկոլոգիական վտանգների ռիսկերը, որոնք կարող են վնաս հասցնել մարդու առողջությանն ու բարեկեցությանը: Այս պարտավորությունների արդյունավետ իրականացումը հանրության բովանդակալից մասնակցությամբ հատկապես արդիական է անցումային հանքահումքի համատեքստում՝ հաշվի առնելով դրա արդյունահանման հնարավոր

---

<sup>22</sup> Նույնը

<sup>23</sup> International Covenant on Economic, Social and Cultural Rights (1966) General Assembly resolution 2200A (XXI): <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-economic-social-and-cultural-rights>

ազդեցությունները շրջակա միջավայրի վրա: Ավելին, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեի Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությունը<sup>24</sup> ընդգծում է, որ պետությունները պետք է «սահմանեն և կիրառեն օրենքներ՝ հանքարդյունաբերական և արտադրական ճյուղերի կողմից ջրի, օդի և հողի աղտոտումը կանխելու համար», ինչպես նաև «պետությունները պետք է մշակեն և իրականացնեն ազգային քաղաքականություններ, որոնք ուղղված են օդի, ջրի և հողի աղտոտման նվազեցմանն ու վերացմանը, ներառյալ ծանր մետաղներով, օրինակ՝ կապարով բենզինի միջոցով առաջացող աղտոտումը»: Այս օրենքները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն հանքարդյունահանող ոլորտի (հանքաքարի, նավթի, գազի արդյունահանում) և վերամշակող արդյունաբերական ոլորտի (գործարաններ, ձուլարաններ) առաջացրած աղտոտմանը: Կարևոր է նշել, որ Թիվ 14 Ընդհանուր մեկնաբանությունը նաև սահմանում է, որ պետությունները պետք է հատուկ ուշադրություն դարձնեն խոցելի կամ լուսանցքում հայտնված խմբերի, այդ թվում՝ կանանց կարիքներին, և հաղթահարեն առողջապահական ծառայությունների հասանելիության գենդերային խոչընդոտները՝ ճանաչելով, որ կանայք կարող են ենթարկվել միջավայրի աղտոտման և վտանգավոր աշխատանքի հետ կապված առանձնահատուկ առողջական ռիսկերի: Բնապահպանական և արդյունաբերական հիգիենայի

---

<sup>24</sup> Ընդհանուր մեկնաբանությունները հստակեցնում են, թե ինչպես պետք է իրացվեն դաշնագրում ամրագրված իրավունքները, ինչ պարտավորություններ ունեն պետությունները, ինչ գործողություններ պետք է ձեռնարկեն կամ որոնցից խուսափեն, և ինչպես պետք է լիարժեքորեն կենսագործվեն այդ իրավունքները:

միջոցառումները պետք է հաշվի առնեն այդ տարբերությունները: Առաջարկվող ծրագրերի հետևանքով հարկադիր վերաբնակեցման համատեքստում նույնչափ կարևոր են Ընդհանուր մեկնաբանություն թիվ 4-ը (Պատշաճ բնակապահովման իրավունք) և Ընդհանուր մեկնաբանություն թիվ 7-ը (Հարկադիր վտարումներ), որոնք շեշտում են պետությունների պարտավորությունները՝ ապահովելու, որ վերաբնակեցման գործընթացները չխախտեն մարդկանց բնակարանային և կենսապահովման հիմնարար իրավունքները:

Օրենսդրության կիրարկումը նույնքան կարևոր է, որքան դրա ընդունումը, ուստի ադտոտող արդյունաբերական ճյուղերի չկարգավորումը կամ չվերահսկումը կարող է համարվել առողջության իրավունքի խախտում: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով կոմիտեի կողմից տրված ուղղորդումները անմիջականորեն հավաստում են, որ պետք է անցկացվեն շրջակա միջավայրի ազդեցության գնահատման գործընթացներ, հատկապես այնպիսիք, որոնք գնահատում են ադտոտման ռիսկերը, ապահովում են հանրության բովանդակալից և վաղ փուլում մասնակցությունը, թափանցիկ են, հիմնված են գիտական տվյալների վրա և հաշվի են առնում մարդկանց առողջության վրա երկարաժամկետ կտրվածքում թողնվող հետևանքները: Այս պարտավորությունների իրականացումը պետությունից պետություն տարբեր է, քանի որ յուրաքանչյուր պետություն այս չափանիշները ներառում է իր ազգային օրենսդրության

մեջ՝ ելնելով իր կոնկրետ հանգամանքներից: Այնուամենայնիվ, պետությունները պարտավոր են երաշխավորել անհատների և խմբերի՝ որոշումների կայացման գործընթացներին մասնակցելու իրավունքը, հատկապես այն դեպքերում, երբ այդ որոշումները կարող են ազդել նրանց զարգացման վրա, ուստի այդ մասնակցությունը պետք է լինի ցանկացած քաղաքականության, ծրագրի կամ ռազմավարության բաղկացուցիչ մաս՝ ի կատարում SUՄԻՄԴ 12-րդ հոդվածով նախատեսված պետական պարտավորությունների: Առողջության խթանումը պետք է ներառի հանրության արդյունավետ մասնակցություն՝ այդ նպատակին հասնելու առաջնահերթությունների սահմանման, որոշումների կայացման, ռազմավարությունների պլանավորման, իրականացման և գնահատման գործընթացներում: Սա հնարավոր է իրականացնել միայն մարդկանց արդյունավետ մասնակցության միջոցով, որը պետք է ապահովեն պետությունները: Բացի դրանից, դաշնագրի կողմ պետությունները պետք է խրախուսեն դատավորներին և իրավակիրառ մասնագետներին իրենց գործունեության շրջանակում խոշորացույցի տակ առնել առողջության իրավունքի խախտումները, ինչպես նաև հարգել, պաշտպանել, աջակցել և խթանել իրավապաշտպանների աշխատանքը, որոնք օգնում են խոցելի կամ

լուսանցքավորված խմբերին իրացնել իրենց առողջության իրավունքը:<sup>25</sup>

Համահունչ հանրության մասնակցության վերաբերյալ ընդհանուր կարգավորիչ դաշտին, որը դիտարկում է որոշումների կայացման գործընթացում մասնակցությունը որպես ճանաչված մարդու իրավունք, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան (CEDAW, 1979 թ.) ճանաչում է կանանց քաղաքացիական և քաղաքական, ինչպես նաև տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքները: Հիմնվելով կոնվենցիայի 14-րդ հոդվածի վրա, կոնվենցիայի մասնակից պետությունները պետք է ճանաչեն կանանց էական դերը ինչպես ոչ դրամական, այնպես էլ դրամական տնտեսության մեջ և խթանեն կանանց մասնակցության տարբեր ձևեր, ներառյալ՝ մասնակցություն համայնքային ամեն տեսակի գործունեությանը (պարբերություն (գ)), զարգացման պլանների մշակման և բոլոր մակարդակներում դրանց իրականացման մեջ (պարբերություն (ա)), ինքնօգնության խմբերի և կոոպերատիվների կազմակերպման մեջ՝ հանուն աշխատանքի կամ ինքնազբաղվածության միջոցով տնտեսական հնարավորությունների հավասար հասանելիության (պարբերություն (ե)):<sup>26</sup> ՄԱԿ-ի Գլխավոր

---

<sup>25</sup> CESCR General Comment No. 14: The Right to the Highest Attainable Standard of Health (Art. 12) (2000) Office of the High Commissioner of Human Rights:

<https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Women/WRGS/Health/GC14.pdf>

<sup>26</sup> CEDAW կոմիտեն ընդունել է նաև Ընդհանուր Հանձնարարական թիվ 34-ը, որը հանգամանալից կերպով անդրադառնում և մեկնաբանում է կոնվենցիան գյուղաբնակ կանանց իրավունքների մասով:

ասամբլեան կոչ է արել պետություններին ամրապնդել և գործի դնել իրավական, քաղաքական և այլ միջոցներ, որոնք ուղղված են հասարակության մեջ կանանց հավասար մասնակցության, լիարժեք ներգրավման և առաջնորդության խթանմանը և պաշտպանությանը, ինչպես նաև ճանաչել կին իրավապաշտպանների հետ լսումների և երկխոսության մեխանիզմներ ստեղծելու և ամրապնդելու անհրաժեշտությունը:<sup>27</sup> Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի Ընդհանուր մեկնաբանություն թիվ 26-ը, որը ընդունվել է 2023 թվականի օգոստոսին,<sup>28</sup> ուղենիշային մեկնաբանություն է տրամադրում երեխաների՝ առողջ շրջակա միջավայրի և հաստատուն կլիմայի իրավունքի վերաբերյալ, ինչպես նաև կոչ է անում ճանաչել երեխաներին որպես փոփոխության գործորդներ և լրջորեն ընդունել նրանց պահանջները բնապահպանական գլոբալ վնասների դեմ անհապաղ միջոցառումներ ձեռնարկելու մասին:<sup>29</sup>

Այդուհանդերձ, խտրականությունից զերծ պահելը բավարար չէ: Գործընթացները պետք է ակտիվորեն բացահայտեն և վերացնեն կառուցվածքային, մշակութային և գործնական

---

<sup>27</sup> Resolution adopted by the General Assembly on 18 December 2013 [on the report of the Third Committee (A/68/456/Add.2)] 68/181. Promotion of the Declaration on the Right and Responsibility of Individuals, Groups and Organs of Society to Promote and Protect Universally Recognized Human Rights and Fundamental Freedoms: protecting women human rights defenders

<https://documents-ddsny.un.org/doc/UNDOC/GEN/N13/450/31/PDF/N1345031.pdf?OpenElement>

<sup>28</sup> Տե՛ս՝, General Comment 26, Convention on the Rights of the Child (2023), հասանելի՝ <https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/crcgc26-general-comment-no-26-2023-childrens-rights>

<sup>29</sup> Նույնը, տե՛ս 4-րդ պարբերությունը

արգելքները, որպեսզի ապահովվի բոլոր ազդակիր կամ հնարավոր ազդեցության ենթակա խմբերի լիարժեք և արդյունավետ մասնակցությունը: Ըստ իրավունքահենք մոտեցման՝ հանրության մասնակցության գործընթացը պետք է լինի ներառական և գենդերափոխակերպող՝ ապահովելով, որ կանայք, երիտասարդները, հաշմանդամություն ունեցող անձինք և այլ լուսանցքավորված խմբեր կարողանան բովանդակալից կերպով մասնակցել: Թեև հաճախ գործածվում է գենդերարձագանքող (gender-responsive) եզրույթը, մենք միտումնավոր գործածում ենք գենդերփոխակերպող (gender-transformative) բառը, քանի որ բավարար չէ, որ միջավայրի վրա ազդող որոշումներում հանրության մասնակցությունն արձագանքի գենդերային հարցերին, այն պետք է նաև թույլ տա վիճարկել ուժային առկա անհավասար դինամիկան ու նորմերը:

Սա ներառում է նրանց հետ կապի այնպիսի մեթոդների, տեղեկատվական ձևաչափերի և լսումների վայրերի ընտրություն, որոնք մատչելի են բոլորի համար, հատել են մշակութային և սոցիալ-տնտեսական արգելքները: Սա նաև ենթադրում է, որ մասնակցության մասին տվյալները պետք է պարունակեն մասնակիցների սեռի մասին տեղեկություններ: Իշխանությունները և ծրագրեր նախաձեռնող սուբյեկտները պետք է ձեռնարկեն պրոակտիվ միջոցառումներ, որպեսզի կանայք, տղամարդիկ և ոչ բինար անձինք ունենան հավասար հնարավորություններ՝ հասանելիություն ունենալու տեղեկատվությանը, արտահայտելու իրենց կարծիքը և

ազդելու լսումների արդյունքների վրա: Նրանք պետք է երաշխավորեն, որ մասնակիցների առանձնահատուկ մտահոգությունները, ներառյալ՝ սեռով պայմանավորված՝ տարբերակված ազդեցությունն առողջության վրա, կենսապահովման հետ կապված ռիսկերը, հասանելիությունը տարբեր տեսակի ռեսուրսների, արտացոլված լինեն որոշումներում:

Ըստ գնահատումների՝ կրիտիկական և ռազմավարական հանքահումքի մեծ պաշարներ գտնվում են այն տարածքներում, որտեղ ապրում են բնիկ ժողովուրդներ: Ազդեցությունը ավանդական կենսակերպի և ապրուստի միջոցների վրա հատկապես մեծ է գյուղացիների իրավունքների համատեքստում՝ պայմանավորված նրանով, որ նրանց ապրելու և ավանդաբար ապրուստ վաստակելու վայրում ծավալվող հանքարդյունաբերությունը ծանր ազդեցություն է թողնում իրենց կյանքի և ավանդական էկոլոգիական գիտելիքները պաշտպանելու և գործունեությունը շարունակելու վրա: Բնիկ ժողովուրդների դեպքում նրանց իրավունքներն առավել հստակ ձևակերպված են Աշխատանքի միջազգային կազմակերպության՝ Բնիկ և ցեղային ժողովուրդների մասին կոնվենցիայում<sup>30</sup> (ԱՄԿ կոնվենցիա թիվ 169) և ՄԱԿ-ի՝ Բնիկ ժողովուրդների իրավունքների համընդհանուր հռչակագրում, իսկ գյուղացիների իրավունքների դեպքում՝ ՄԱԿ-ի՝

---

<sup>30</sup> International Labour Organization Convention Concerning Indigenous and Tribal Peoples in Independent Countries, 27 June 1989, into force 5 September 1991, 28 ILM 1382

«Գյուղացիների և գյուղական գործունեությամբ զբաղվող այլ անձանց իրավունքների մասին հռչակագրում» (2018 թ.): Վերջինի 18-րդ հոդվածն ընդգծում է, թե ինչ առանձնահատկությամբ է կարևոր գյուղական բնակավայրերում ապրող անհասների և խմբերի մասնակցությունը: Գյուղական համայնքներում մարդիկ անհատապես և կոլեկտիվ կերպով մասնակցում են մշակաբույսերի ընտրության և պահուստավորման գործընթացներին, ինչը նպաստում է կյանքի որակի բարելավմանը՝ ապահովելով բազմազան և սննդաբար սնունդ, ինչն էլ կապված է ՏՄՄԻՄԴ 11-րդ հոդվածով ճանաչված՝ բավարար սննդի իրավունքի իրացման հետ: Կյանքի որակի բարելավմանը նպաստելուն միտված հանրային մասնակցության ուժը փոխկապակցված է լայն շրջանակի իրավունքների, ինչպես նաև այնպիսի սկզբունքների հետ, ինչպիսիք են՝ հավասարությունն ու խտրականության բացառումը, քանի որ միջազգային մարդու իրավունքների կորպուսն ամրագրում է յուրաքանչյուր մարդու՝ անկախ սեռից, տարիքից կամ սոցիալ-տնտեսական իրավիճակից, լավ կյանքի որակ ունենալու իրավունքը: Ի դեպ, այդ իրավունքի հղացական մեկնաբանությունների շուրջ ծավալվել է<sup>31</sup> Հանուն

---

<sup>31</sup> Knox J. (2017), UNHRC ‘Report by Special Rapporteur on the Issue of Human Rights Obligations Relating to the Enjoyment of a Safe, Clean, Healthy and Sustainable Environment’: Այս զեկույցն ընդգծում է, որ միջազգային մարդու իրավունքներով ճանաչվում է, որ յուրաքանչյուր մարդ արարած ունի իրավունք այն հասկացության, որը Հազարամյակի էկոհամակարգերի գնահատումը սահմանում է որպես բարեկեցություն: A/HRC/34/49, (19 January, 2017); հասանելի՝ <https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/ahrc3449-report-special-rapporteur-issue-human-rights-obligations.html> (վերջին մուտքը՝ 16 հոկտեմբերի, 2023 թ.)

կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների միջկառավարական գիտա-քաղաքական հարթակը (IPBES):<sup>32</sup> Պետությունները, որպես մարդու իրավունքների իրականացման հիմնական պատասխանատուներ, պարտավոր են պաշտպանել էկոհամակարգերն ու կենսաբազմազանությունը, քանի որ այդ պարտականությունը բխում է այն հիմնարար դերից, որն ունի կենսաբազմազանությունը էկոհամակարգային ծառայություններ մատուցելու գործում, որոնք էլ անհրաժեշտ են մարդու՝ լայն տիրույթով հիմնարար իրավունքների՝ ներառյալ կյանքի, առողջության, սննդի, ջրի և մշակույթի իրավունքների լիարժեք իրագործման համար:<sup>33</sup>

Որպեսզի ապահովվի արդար կանաչ անցման համատեքստում հանրության մասնակցության իրավունքահենք և հավասարության մոտեցումը, պետք է երաշխավորվի, որ կանայք, ինչպես նաև լուսանցքավորված այլ պոտենցիալ խմբեր այդ գործընթացում ունենան հավասար հնարավորություններ՝ տեղեկատվություն ստանալու, բովանդակալից մասնակցություն ցուցաբերելու լուսմներին և ազդելու դրանց արդյունքների վրա: Պետք է նաև ապահովվի, որ ըստ դեմոգրաֆիական խմբերի՝ սոցիալական, տնտեսական և առողջության վրա տարբերակված ազդեցությունները համակարգված ձևով երևան հանվեն, գնահատվեն և լուծվեն

---

<sup>32</sup> IPBES-ի, այդ թվում՝ Գլոբալ գնահատման մասին ավելին տե՛ս այստեղ՝ <https://www.ipbes.net/global-assessment>

<sup>33</sup> Նույն տեղում

նախնական գնահատման և թույլտվությունների տրամադրման ողջ ընթացքում: Այս առումով, Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիան, մասնավորապես՝ Ընդհանուր հանձնարարական թիվ 37-ը,<sup>34</sup> որը վերաբերում է կլիմայի փոփոխության համատեքստում աղետների ռիսկի նվազեցման գենդերային ասպեկտերին, ինչպես նաև Ընդհանուր հանձնարարական թիվ 34-ը,<sup>35</sup> որը վերաբերում է գյուղաբնակ կանանց իրավունքներին, կոչ են անում պետություններին՝ գենդերային դիտանկյուններ ներառել շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներում, ներառյալ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումներում, ինչպես նաև ապահովել կանանց լիարժեք և արդյունավետ մասնակցությունը բնական ռեսուրսների կառավարման և այն որոշումների կայացման գործընթացներում, որոնք ազդում են նրանց հողի, կենսապահովման և առողջության վրա:

Բնապահպանական բազմակողմ համաձայնագրերը, ինչպիսիք են՝ Կլիմայի փոփոխության մասին ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան,<sup>36</sup> Փարիզյան համաձայնագիրը<sup>37</sup> և

---

<sup>34</sup> [CEDAW/C/GC/37](#)

<sup>35</sup> Committee on the Elimination of Discrimination against Women. (2018, February 7). General recommendation No. 37: Gender-related dimensions of disaster risk reduction in the context of climate change (CEDAW/C/GC/37). United Nations. [https://academy.ishr.ch/upload/resources\\_and\\_tools/CEDAW%20general%20recommendation%2037\\_en.pdf](https://academy.ishr.ch/upload/resources_and_tools/CEDAW%20general%20recommendation%2037_en.pdf)

<sup>36</sup> United Nations (1992) UN Framework Convention on Climate Change, տե՛ս՝ [chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://unfccc.int/files/essential\\_background/background\\_publications\\_htmlpdf/application/pdf/conveng.pdf](chrome-extension://efaidnbmnnnibpcajpcglclefindmkaj/https://unfccc.int/files/essential_background/background_publications_htmlpdf/application/pdf/conveng.pdf)

<sup>37</sup> United Nations (2015) Paris Agreement, տե՛ս՝ <https://unfccc.int/process-and-meetings/the-paris-agreement>

Կենսաբազմազանության մասին կոնվենցիան,<sup>38</sup> նույնպես նպաստում են կանաչ անցման համատեքստում մասնակցության իրավունքի հստակեցմանը: Վերջինիս առնչությամբ՝ «Գլոբալ կենսաբազմազանության շրջանակ» անվանվող միջազգային համաձայնագրով (նաև՝ Կունմինգ-Մոնրեալի համաձայնագիր) մասնակից երկրները պարտավորվում են՝ «*Երաշխավորել որոշումների կայացման գործընթացում բնիկ ժողովուրդների և տեղի համայնքների լիարժեք, արդար, ներառական, արդյունավետ և գենդերարձագանքող ներկայացվածությունն ու մասնակցությունը, ինչպես նաև արդարադատության և տեղեկատվության հասանելիությունը կենսաբազմազանության հետ կապված հարցերում՝ հարգելով նրանց մշակույթը, հողի, տարածքների, ռեսուրսների և ավանդական գիտելիքների նկատմամբ ունեցած իրավունքները, ինչպես նաև կանանց և աղջիկների, երեխաների ու երիտասարդների և հաշմանդամություն ունեցող անձանց մասնակցությունը, ինչպես նաև ապահովել բնապահպան իրավապաշտպանների լիարժեք պաշտպանությունը*»:

Պարտադիր ուժ ունեցող միջազգային փաստաթղթերին զուգահեռ թեմայի շուրջ ընդհանուր ուղենիշային քաղաքականություն և բողոքարկման մեխանիզմներ սահմանելու հարցում կարևոր դեր ունեն նաև տարբեր

---

<sup>38</sup> United Nations (1993) Convention on Biological Diversity, տե՛ս՝ <https://www.cbd.int/convention/articles/default.shtml?a=cbd-00>

հաստատությունների ուղեցուցային փաստաթղթերը՝ որպես սեփական քաղաքականությունը հաստատող ուղենիշներ: Օրինակ՝ արդար անցման համատեքստում հանրային մասնակցության խթանման համար օգտակար կարող են լինել Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) մշակած միջազգային ուղեցույցներն՝ ուղղված սոցիալական, տնտեսական և բնապահպանական խնդիրների հասցեագրմանը՝ հստակեցնելով մասնավոր (հատկապես կրիտիկական հանքահումքի ապրանքային շղթաներում ներգրավված) ընկերությունների կորպորատիվ պատասխանատվության և պատշաճ համալիր գնահատման (due diligence) շրջանակը: ՏՀԶԿ-ի «Պատշաճ համալիր գնահատում»<sup>39</sup> վերնագրված ուղեցույցում ներկայացված են չափանիշներ՝ կապված որոշումների կայացման ամբողջ ցիկլում, սկսած հանքարդյունաբերական ծրագրերի նախնական փուլերից մինչև դրանց ողջ ընթացքը, կորպորատիվ սոցիալական պատասխանատվության և շահագրգիռ կողմերի բովանդակալից ներգրավման հետ: Այս ուղեցույցը կիրառելի է հանքարդյունաբերական ոլորտում գործող բոլոր ընկերությունների համար՝ անկախ դրանց մեծությունից և այլ հատկանիշներից: ՏՀԶԿ տեսլականի համաձայն՝ բոլոր մարդիկ օժտված են մարդու իրավունքներով, ուստի բոլոր շահագրգիռ կողմերը, որպես անհատներ, համարվում են «իրավունքի կրողներ» կամ «իրավատերեր» (rights-holder): Սակայն, պետք է

---

<sup>39</sup> OECD Due Diligence Guidance for Meaningful Stakeholder Engagement in the Extractive Sector <https://mneguidelines.oecd.org/stakeholder-engagement-extractive-industries.htm>

հաշվի առնել, որ ոչ բոլոր շահագրգիռ կողմերի մարդու իրավունքներն են վտանգվում կամ բացասական ազդեցություն կրում հանքարդյունաբերական ծրագրերի կամ դրանց ուղեկցող գործունեության հետևանքով: Ուստի, շահագրգիռ անձանց և խմբերի շրջանում հանքարդյունաբերական գործունեության պատճառով մարդու իրավունքների ռիսկերի նախապես հայտնաբերումը և այդ շահագրգիռ կողմերին որպես «իրավատերեր» ճանաչելը անչափ կարևոր է նրանց ներգրավման գործընթացներում: Հետևաբար, իրավատերերի նույնականացումը հանդիսանում է առաջին և էական քայլը՝ ապահովելու, որ մարդու իրավունքները ճանաչվեն և հարգվեն:

Արդար կանաչ անցման համատեքստում հանրության մասնակցության հետ կապված այլ կարևոր գործիքներ են բազմակողմ զարգացման բանկերի սոցիալական և բնապահպանական քաղաքականությունները: Հաշվետվողականության և իրավունքի գերակայության սկզբունքներին համահունչ՝ կարևոր է, որ այդ քաղաքականությունները համապատասխանեն միջազգային մարդու իրավունքների ստանդարտներին և աջակցեն ժողովրդավարական հաստատություններին այն երկրներում, որտեղ տվյալ բանկերն իրականացնում են իրենց գործունեությունը: Կարևոր է նշել, որ Կրիտիկական հանքահումքի մասին եվրոպական ակտը (CRMA) նախատեսում է «ռազմավարական ծրագրերի» ֆինանսավորումը համակարգել եվրոպական ֆինանսական

հաստատությունների միջոցով, ներառյալ՝ Եվրոպական ներդրումային բանկի խմբի (EIB Group) կամ այլ միջազգային ֆինանսական հաստատությունների, այդ թվում՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎՋԵԲ) միջոցով: Սա նշանակում է, որ տվյալ ֆինանսական հաստատությունների սոցիալական և շրջակա միջավայրին վերաբերող ստանդարտները, ինչպես նաև բողոքարկման մեխանիզմները կիրառելի կլինեն իրենց կողմից ֆինանսավորվող ծրագրերի նկատմամբ: Չնայած նրան, որ ՎՋԵԲ-ը չի կիրառում մարդու իրավունքների և «իրավատերերի» տերմինաբանություն, այնուամենայնիվ, 2024 թվականին թարմացված՝ Շրջակա միջավայրի և սոցիալական պահանջները<sup>40</sup> հորդորում են իրենց հաճախորդներին հնարավորինս վաղ փուլում նույնականացնել և ներգրավել շահագրգիռ կողմերին միջավայրի վրա և սոցիալական ազդեցության գնահատման գործընթացում՝ որպես ծրագրի պլանավորման և իրականացման անբաժան մաս, և շարունակել ներգրավման գործընթացները նաև շրջակա միջավայրի և սոցիալական կառավարման համակարգերի մշակման և իրագործման փուլում: Բանկը պահանջում է ապահովել, որ շահագրգիռ կողմերը ողջամիտ ժամկետներում և բովանդակալից, արդյունավետ և մշակութային առումով հարիր եղանակով ստանան ակտուալ, հասկանալի և մատչելի տեղեկատվություն: Ա կատեգորիայի ծրագրերի դեպքում, ինչպիսին է մետաղական հանքաքարի արդյունահանումը,

---

<sup>40</sup> EBRD, Environmental and Social Requirements 2024 <https://www.ebrd.com/home/news-and-events/publications/institutional-documents/environmental-and-social-policy-2024.html#>

հաճախորդը պարտավոր է իրականացնել ծրագրի մասին իրազեկման և լուսմների պաշտոնական և մասնակցային գործընթաց: Այլ միջազգային ֆինանսական հաստատություններ նույնպես ունեն համանման ստանդարտներ, որոնց կից նշանակված են հաշվետվողականության անկախ մարմիններ (հաշվետվողականության մեխանիզմներ), որոնք քննում են քաղաքացիական հասարակության և տեղի համայնքների ներկայացրած բողոքները՝ կապված հոչակված ստանդարտների պահպանման հետ:

Ըստ ՎՋԵԲ-ի՝ Շրջակա միջավայրի և սոցիալական պահանջների՝ հստակորեն պահանջվում է ներառել գենդերային նկատառումները և իրականացնել մարդու իրավունքների վերաբերյալ պատշաճ համալիր գնահատումը (human rights due diligence) ծրագրերի պլանավորման, իրականացման և մոնիթորինգի ընթացքում: Սա ենթադրում է՝ շահագրգիռ կողմերի նույնականացում և ներգրավում հնարավորինս վաղ փուլում, գենդերաթափանցիկ և ներառական ներգրավման ապահովում, հատկապես՝ խոցելի և ներկայացվածությունից զուրկ խմբերի համար, ինչպես նաև ելակետային և մոնիթորինգի տվյալների հավաքագրում՝ բաշխված ըստ սեռի: Քաղաքականությունն ուղղակիորեն պահանջում է՝ գնահատել և մեղմացնել գենդերային հիմքով բռնության և սեռական ոտնձգության, երեխաների սեռական շահագործման ռիսկերը, ինչպես նաև մասնագիտական հիվանդությունների և աշխատանքի անվտանգության՝ սեռով

պայմանավորված ինդիքները և աշխատակիցներին ապահովել սեռին համապատասխանող անհատական պաշտպանիչ միջոցներով: Այն նաև հստակ պարտավորություններ է սահմանում վարկավորվող ընկերությունների համար, որ վերաբնակեցման դեպքում համապատասխան գործողությունները լինեն գենդերարձագանքող, այսինքն՝ կանայք մասնակցեն լսումներին, փոխհատուցումը, կենսապահովման վերականգնումը և սեփականության իրավունքների իրացումը նրանց հասանելի լինի արդար հիմունքներով, նույնիսկ այն դեպքերում, երբ տվյալ պետության օրենքները ամբողջությամբ չեն ճանաչում այդ իրավունքները: Բացի այդ, շահագրգիռ կողմերի ներգրավման գործընթացները և բողոքարկման մեխանիզմները պետք է լինեն գենդերային առումով ներառական, մշակութային առումով՝ հարիր, ինչպես նաև մատչելի: Հաճախորդ ընկերություններում պետք է գործի ահազանգման ապահով համակարգ, իսկ դրանց արձագանող անձնակազմը պետք է լինի պատրաստված և կարողանա ճիշտ ձևով արձագանքել զգայուն բողոքներին:

Շրջակա միջավայրին հասցվելիք վնասի կանխարգելման նպատակով արդար անցման համատեքստում հանրության մասնակցության մեկնարկային կետերից մեկը հանրության իրավունքն է հիմնավոր և բովանդակալից ձևով մասնակցելու հանրային լսումներին, որոնք անցկացվում են կրիտիկական հանքահումքի արդյունահանման ՇՄԱԳ գործընթացներում: Ստորև ներկայացված բաժինը կենտրոնանում է հենց այս

հարցի վրա ԵՄ-ի և ԵՄ Արևելյան գործընկերության երկրների  
համատեքստում:

## 4. Անցումային հանրահումբի արդյունահանման ծրագրերի ՇՄԱԳ գործընթացներում հանրության մասնակցության ապահովումը Եվրոպայում

### 4.1 Օրինակելի ուղենիշները՝ համատեքստի մեջ. Եվրամիություն և Արևելյան գործընկերության երկրներ

Հանրության մասնակցությունը պարզաբանող միջազգային փաստաթղթերը, որոնք ներկայացվեցին նախորդ գլխում, անհրաժեշտ է ընթերցել ԵՄ Հիմնարար իրավունքների խարտիային զուգահեռ: Խարտիայի 37-րդ հոդվածը, մասնավորապես, ուղղորդում է, թե ինչպես պետք է միջավայրի պաշտպանությունը ներառվի ԵՄ ներքին և արտաքին քաղաքականություններում. *«Միջավայրի պաշտպանության բարձր մակարդակը և միջավայրի որակի բարելավումը պետք է ներառվեն Միության քաղաքականություններում և ապահովվեն՝ կենսակայուն զարգացման սկզբունքին համահունչ»*: Միջավայրի վրա ազդեցության գնահատման գործընթացներում հանրության մասնակցության գործնական իրականացումն ապահովելու համար միջազգային և տարածաշրջանային մարմինները, ինչպիսիք են՝ ՄԱԿ-ը, ՏՀԶԿ-ն և ԵՄ-ն,<sup>41</sup> մշակել են իրավական ընթացակարգեր, քաղաքականություններ և ուղղորդիչ փաստաթղթեր: ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվը (2011/92/EU),<sup>42</sup> ինչպես նաև լրացուցիչ այլ

<sup>41</sup> ՄԱԿ-ի վերաբերյալ մեկնաբանությունները ներկայացվել են վերևում, իսկ ՏՀԶԿ և ԵՄ վերաբերյալ տե՛ս ստորև:

<sup>42</sup> Directive 2014/52/EU of the European Parliament and of the Council of 16 April 2014 amending Directive 2011/92/EU on the assessment of the effects of certain public and private

իրավական ակտեր, սահմանում են հանրության պատշաճ մասնակցությունն ապահովելու մասին ընդհանուր կանոններ ԵՄ բոլոր անդամ պետությունների համար: Այսինքն, ամրագրված է հանրության իրավունքը լիարժեքորեն մասնակցելու հանրային լուսմներին, որոնք կազմակերպվում են պետությունների կողմից նշանակված իրավասու մարմինների միջոցով:

Թեև ԵՄ օրենսդրությունը պարտադիր չէ ԵՄ անդամ չհանդիսացող պետությունների համար, ԵՄ Արևելյան գործընկերության մի շարք երկրներում ընթացքի մեջ է իրավական դաշտի համապատասխանեցումը ԵՄ օրենսդրությանը: Կան երկրներ, որոնք ԵՄ-ի հետ ստորագրել են ռազմավարական գործընկերության համաձայնագրեր՝ կապված կրիտիկական հանքահումքի և այլ հարցերի հետ, ինչի շնորհիվ ԵՄ օրենսդրությունը՝ հանձին Կորպորատիվ կենսակայունության պատշաճ համալիր գնահատման (Corporate Sustainability Due Diligence) կամ Կրիտիկական հանքահումքի մասին ակտի (CRMA) շրջանակներում գործող սերտիֆիկացման համակարգի, դառնում է հանքահումքի ապրանքային շղթայի անբաժանելի մաս: Այդ իսկ պատճառով, կարևոր է այստեղ ավելի մանրամասն անդրադառնալ ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվում ամրագրված որոշ առանցքային սահմանումներին:

---

projects on the environment Text with EEA relevance <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0052>

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը» նշանակում է մի գործընթաց, որը բաղկացած է հետևյալից.

(i) ծրագրի նախաձեռնողի կողմից շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության պատրաստում՝ համաձայն Հոդված 5-ի 1-ին և 2-րդ կետերի,

(ii) հանրային քննարկումների իրականացում՝ համաձայն Հոդված 6-ի և եթե վերաբերելի է, համաձայն Հոդված 7-ի,

(iii) իրավասու (այդ թվում՝ գործիմաց) մարմնի կողմից ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված տեղեկատվության և, անհրաժեշտության դեպքում, նախաձեռնողի կողմից Հոդված 5-ի 3-րդ կետի համաձայն տրամադրված լրացուցիչ տվյալների, ինչպես նաև Հոդված 6 և 7-ի շրջանակներում հանրային քննարկումների միջոցով ստացված համապատասխան տեղեկատվության քննում,

(iv) իրավասու մարմնի հիմնավորված եզրակացության հրապարակում միջավայրի վրա ծրագրի էական ազդեցությունների վերաբերյալ՝ հաշվի առնելով (iii) կետում նշված քննության/փորձաքննության արդյունքները և, անհրաժեշտության դեպքում, սեփական լրացուցիչ ուսումնասիրությունը:

ԵՄ հարևան երկրներում՝ մասնավորապես Բոսնիա և Հերցեգովինայում, Սերբիայում, Վրաստանում և Հայաստանում<sup>43</sup> հանքարդյունահանման իրավիճակի մի ուսումնասիրությունն ցույց է տվել, որ խոշոր հանքարդյունաբերական գործունեությունից առաջացած աղտոտման հիմնական զոհը դառնում է տեղի բնակչության առողջությունը: Այս իրավիճակը հանգեցրել է հանքարդյունաբերության դեմ լայնածավալ հանրային դիմադրության: Միջավայրի վրա հանքարդյունաբերության ազդեցության կանխարգելման համար անհրաժեշտ են նպատակային քայլեր և ուժեղ քաղաքական կամք, որոնք պետք է իրականացվեն ազդեցության գնահատման և առողջության վրա ազդեցության մոնիտորինգի գործընթացներում:

<sup>43</sup> Heinrich Boll Stiftung, E-PAPER, “The raw materials situation in neighboring European countries: Bosnia and Herzegovina, Serbia, Georgia, Armenia”, July 2024  
[https://www.boell.de/sites/default/files/2024-10/e-paper\\_the\\_raw\\_minerals\\_situation\\_endf2.pdf](https://www.boell.de/sites/default/files/2024-10/e-paper_the_raw_minerals_situation_endf2.pdf)

(v) իրավասու մարմնի հիմնավորված եզրակացության արտացոլում այն որոշումներում, որոնք նշված են Հոդված 8ա-ում:<sup>44</sup>

Համահունչ Օրհուսի կոնվենցիային՝ ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվը սահմանում է նվազագույն չափորոշիչներ, որոնք անդամ պետությունները պետք է պահպանեն միջավայրի վրա ազդեցության տեսանկյունից նվազագույն բացասական ազդեցություն ունեցող արդյունաբերական ծրագրերի (environmentally-sound industrial projects), այդ թվում՝ անցումային հանքահումքի արդյունահանմանը վերաբերող ծրագրերի ազդեցության գնահատումը կարգավորող օրենսդրություն ընդունելիս: Միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում հանրության մասնակցությունը հաճախ իրականացվում է ՇՄԱԳ-ի ընթացքում կազմակերպվող հանրային լսումների (խորհրդակցությունների) միջոցով: Այդ պատճառով կարևոր է ունենալ համապատասխան իրավական և ինստիտուցիոնալ համակարգ՝ համահունչ միջազգային մարդու իրավունքների վերաբերելի օրենսդրությանը և դրա կիրարկման մեխանիզմներին:

Համաշխարհային մակարդակով մեծանում է պահանջարկը ԵՄ-ի ռազմավարական ոլորտների՝ վերականգնվող

---

<sup>44</sup> European Parliament & Council. (2011, December 13). *Directive 2011/92/EU on the assessment of the effects of certain public and private projects on the environment (codified version, as amended)*. Official Journal of the European Union, L 26, 1. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:02011L0092-20140515>

էներգետիկայի, թվային ոլորտի, ավիացիայի և տիեզերագնացության, ինչպես նաև ռազմական պաշտպանության համար անհրաժեշտ մեծ քանակությամբ տեխնոլոգիաների նկատմամբ: Այդ տեխնոլոգիաների արտադրությունը պահանջում է կոնկրետ տեսակի հանքահումք: Այս պատճառով ԵՄ-ն ընդունել է Կրիտիկական հանքահումքի մասին ակտը (CRMA),<sup>45</sup> որում կան հանրության մասնակցության ընթացակարգային հարցերի վերաբերյալ դրույթներ: CRMA-ն ռազմավարական ծրագրերին տալիս է այսպես կոչված՝ «գերակա» կարգավիճակ, քանի որ համարվում է, որ դրանք նպաստում են ԵՄ-ում ռազմավարական հանքահումքի ապրանքային շղթայի ապահովությանը: Համահունչ կենսակայուն հանքահումքի վերաբերյալ ԵՄ սկզբունքներին՝ ռազմավարական ծրագրերը պետք է պլանավորվեն և իրականացվեն այնպես, որ ապահովեն միջավայրի պաշտպանությունը, թափանցիկ բիզնես գործելակերպը, կանխեն և նվազեցնեն սոցիալական բացասական ազդեցությունները, ինչպես նաև կիրառեն սոցիալապես կենսակայուն գործելակերպ, ներառյալ՝ մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը: Չնայած կրիտիկական և ռազմավարական հանքահումքի գերակա կարգավիճակին՝ պայմանավորված դրա մակատարարումը ԵՄ անխափան դարձնելու քաղաքականության հետ, միջավայրի վրա դրա

---

<sup>45</sup> Regulation (EU) 2024/1252 of the European Parliament and of the Council of 11 April 2024 establishing a framework for ensuring a secure and sustainable supply of critical raw materials and amending Regulations (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1724 and (EU) 2019/1020 (Text with EEA relevance) <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02024R1252-20240503>

արդյունահանումից առաջացած ազդեցությունների վերաբերյալ բոլոր պարտավորությունները պետք է պահպանվեն: Ռազմավարական ծրագրերի թույլատվությունների տրամադրման գործընթացի արդյունավետ իրականացումն ապահովելու նպատակով՝ համապատասխան լիազոր մարմինները պետք է երաշխավորեն, որ գործընթացն իրականացվի հնարավոր առավելագույն արագությամբ՝ ԵՄ և ներպետական օրենսդրությանը համապատասխան, ներառյալ՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտավորությունների պատշաճ կատարումը, որոնք բխում են ԵՄ բոլոր վերաբերելի դիրեկտիվներից (Հաբիտատի դիրեկտիվ, Ջրի դիրեկտիվ, Արդյունաբերական արտանետումների դիրեկտիվ և այլն): Միևնույն ժամանակ, քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունները, որոնք համապատասխանում են Օրհուսի կարգավորումների մասին ակտով<sup>46</sup> սահմանված չափանիշներին, իրավունք ունեն ներկայացնելու վարչական ցանկացած ակտի ներքին վերանայման պահանջ, այդ թվում՝ ԵՄ Հանձնաժողովի այն որոշումների, որոնցով հանքարդյունաբերական որևէ ծրագիր ճանաչվել է ռազմավարական:

---

<sup>46</sup> Aarhus regulation No 1367/2006 (regarding Request for Internal Review of designation the Strategic Projects) <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32006R1367>

Եվրոպայի տարածքում սույն օրինակելի ուղեցույցը գործի դնելու համար նպատակահարմար ենք համարում ներկայացնել այն կապերը, որոնք կան Օրհուսի կոնվենցիայի և միջազգային կարգավորիչ դաշտի, ինչպես նաև տարածաշրջանային իրավական ակտերի՝ մասնավորապես ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվի միջև:

## 4.2 Օրինակելի ուղենիշների բացատրական նկարագրություն

Կանաչ անցման համատեքստում հանրության մասնակցության մասին Ա-ից Ե) օրինակելի ուղենիշները գործնականում կիրառելի են դարձնում դրանց անբաժան մասը հանդիսացող կենսագործման սկզբունքները: Դրանք կրիտիկական հանքահումքի արդյունահանման ժամանակ իրականացվելիք ՇՄԱԳ գործընթացների շուրջ լայն նորմատիվ պարտավորությունները վերածում են հստակ ընթացակարգային ստանդարտների: Թեև կենսագործման սկզբունքներն ամրագրում են որոշումների կայացման գործընթացում թափանցիկության, ներառման, գենդերային զգայունության և հաշվետվողականության վերաբերյալ ընդհանուր բնույթի պարտավորություններ, ուղենիշներն իրենց հերթին պարզաբանում են, թե ինչպես պետք է այդ սկզբունքները կյանքի կոչվեն ԵՄ իրավական դաշտի շրջանակներում՝ մասնավորապես ՇՄԱԳ Դիրեկտիվի (2011/92/EU), Կրիտիկական հանքահումքի մասին ակտի

(CRMA),<sup>47</sup> ինչպես նաև համապատասխան այլ իրավական ակտերի՝ Հաբիտատի դիրեկտիվի (92/43/EEC),<sup>48</sup> Արդյունաբերական արտանետումների դիրեկտիվի (2010/75/EU)<sup>49</sup> և Ջրի շրջանակային դիրեկտիվի (2000/60/EC)<sup>50</sup> ներքո: Այս բոլոր իրավական փաստաթղթերի համակցված կիրառմամբ նպատակ է դրվում ապահովել, որ կրիտիկական հանքահումքի արդյունահանման ծրագրերի վերաբերյալ որոշումները հիմնված լինեն բոլոր իրավատեր անձանց բովանդակալից մասնակցության վրա, տարբեր ինստիտուտների մակարդակով համապարփակ կերպով ներառեն սոցիալական և բնապահպանական մտահոգությունները և ամրապնդեն արդարադատության հասանելիությունը՝ որպես արդար և կենսակայուն անցման հիմք:

## **Ուղենիշ Ա. Ապահովել, որ իրավատեր բոլոր անձինք կարողանան ձեռք բերել, հասկանալ և օգտագործել**

<sup>47</sup> European Union. (2024, April 11). Regulation (EU) 2024/1252 of the European Parliament and of the Council establishing a framework for ensuring a secure and sustainable supply of critical raw materials and amending Regulations (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1724 and (EU) 2019/1020 (OJ L, 3 May 2024). CRMA, Article 11(1-4), see here:

<https://eur-lex.europa.eu/eli/reg/2024/1252/oj/eng>

<sup>48</sup> European Union. (1992, May 21). *Council Directive 92/43/EEC on the conservation of natural habitats and of wild fauna and flora*. Official Journal of the European Communities, L 206, 7–50. <https://eur-lex.europa.eu/eli/dir/1992/43/oj/eng>

<sup>49</sup> European Union. (2010, December 17). *Directive 2010/75/EU of the European Parliament and of the Council of 24 November 2010 on industrial emissions (integrated pollution prevention and control) (recast)*. Official Journal of the European Union, L 334, 17–119. <https://eur-lex.europa.eu/eli/dir/2010/75/oj/eng>

<sup>50</sup> European Union. (2000, December 22). *Directive 2000/60/EC of the European Parliament and of the Council of 23 October 2000 establishing a framework for Community action in the field of water policy*. Official Journal of the European Communities, L 327, 1–73. <https://eur-lex.europa.eu/eli/dir/2000/60/oj/eng>

**կրիտիկական հանքահումքի հետ կապված  
բնապահպանական տեղեկատվությունը ողջամիտ  
ժամկետներում և ներառականորեն:**

Հանքարդյունաբերական պոտենցիալ ծրագրի համատեքստում կոնկրետ իրավունքներ կրող (իրավատեր) անձանց կամ շահագրգիռ հանրությանը պետք է ճանաչել ոչ միայն տարածքին մերձակա լինելու հիմքով, այլ նաև՝ ըստ ծրագրի իրական հնարավոր ազդեցությունների, որոնք հաշվի են առնում, օրինակ, ստորերկրյա ջրային համակարգերի վրա կուտակային ազդեցությունները կամ ծրագրի հնարավոր հետևանքները տարածքի գետերի վերին և ստորին հատվածի համայնքների համար: Համակարգումը տեղական ինքնակառավարման մարմինների հետ կարող է նպաստել նրան, որ պոտենցիալ ազդակիր համայնքները պատշաճ ներկայացված լինեն և կարողանան մասնակցել լուսմների բոլոր փուլերին: Որոշելը, թե ով է «շահագրգիռ հանրությունը» (այսինքն՝ պոտենցիալ ազդակիրները), կարևոր նախապայման է, որպեսզի ապահովվի տեղեկատվության հասանելիություն, մասնակցության մատչելիություն և իրավասուբյեկտություն դատարանում որոշումները վիճարկելու համար: Գործընթացը պետք է հաշվի առնի նաև գենդերային դինամիկան՝ ապահովելով, որ կանայք և ներկայացվածությունից զրկված այլ խմբերը ունենան հավասար հնարավորություն մասնակցելու և ազդելու արդյունքների վրա: Այս մոտեցումները պետք է իրենց բնույթով լինեն փոխհատվող՝ ճանաչելով խտրականության և արտոնության բազմաշերտ և

խաչաձև ձևերը, որոնք ազդում են մարդկանց՝ միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում բովանդակալից կերպով մասնակցելու կարողության վրա:

Ըստ ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվի 6-րդ հոդվածի՝ *«հանրությունը պետք է ստորև բերված կետերի շուրջ տեղեկացվի էլեկտրոնային եղանակով և հանրային ազդագրերով կամ այլ համապատասխան եղանակներով՝ միջավայրի վրա ազդող որոշումների կայացման գործընթացի վաղ փուլերում»*, երբ այդ տեղեկությունները հասանելի լինեն.

- ծրագրի հայտի թույլտվության վերաբերյալ (օրինակ՝ շահագործման թույլտվություն),
- այն հանգամանքի վերաբերյալ, որ նախագիծը ենթակա է ՇՄԱԳ գործընթացի,
- որոշում կայացնող պատասխանատու լիազորված մարմնի, տեղեկատվություն ստանալու աղբյուրների, կարծիքներ կամ հարցեր ներկայացնելու մարմինների, ինչպես նաև կարծիքներ և հարցադրումներ ներկայացնելու ժամանակացույցի մանրամասների վերաբերյալ,
- հնարավոր որոշումների բնույթի վերաբերյալ կամ, եթե առկա է, որոշման նախագծային տարբերակի մասին,
- տեղեկատվություն, թե որտեղ են հասանելի հավաքագրված տվյալները (օրինակ՝ նախաձեռնողի կողմից ՇՄԱԳ հաշվետվության մեջ են արտացոլված

- կամ, անհրաժեշտության դեպքում, լրացուցիչ տեղեկատվությունը որտեղ է հասանելի),
- համապատասխան տեղեկատվությունը հասանելի դարձնելու ժամկետների և վայրերի, ինչպես նաև միջոցների վերաբերյալ,
  - հանրության մասնակցություն ապահովող միջոցառումների մանրամասների վերաբերյալ՝ հիմնվելով նախաձեռնողի կողմից նախագծի վերաբերյալ տրամադրված տեղեկատվության վրա:

ՇՄԱԳ իրականացնելիս նախաձեռնողը պարտավոր է պատրաստել և ներկայացնել ՇՄԱԳ հաշվետվություն՝ համաձայն ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվի Հոդված 5(1)-ի: Նախաձեռնողի կողմից տրամադրվող տեղեկատվությունը պետք է ներառի առնվազն հետևյալը.

(ա) ծրագրի նկարագրությունը, որը ներառում է տեղեկատվություն տեղանքի, ծրագրի նախագծման, ծավալների և ծրագրի այլ համապատասխան բնութագրիչների մասին,

(բ) ծրագրի կողմից միջավայրի վրա հնարավոր զգալի ազդեցությունների նկարագրությունը,

(գ) ծրագրի այն բաղադրիչների և/կամ նախատեսվող միջոցների նկարագրությունը, որոնք ուղղված են միջավայրի վրա հնարավոր զգալի բացասական ազդեցություններից խուսափելուն, դրանք կանխելուն, նվազեցնելուն և, հնարավորության դեպքում, փոխհատուցելուն,

(դ) նախաձեռնողի կողմից ծրագրի և դրա առանձին բնութագրիչների ողջամիտ այլընտրանքների ուսումնասիրության նկարագրությունը, ինչպես նաև ընտրված տարբերակի հիմնական պատճառների ներկայացումը՝ ըստ միջավայրի վրա դրա ազդեցության, (ե) ոչ տեխնիկական ամփոփում (ա)-(դ) կետերում նշված տեղեկատվության վերաբերյալ, (զ) ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն, որն առնչվում է տվյալ կամ այդ տեսակի ծրագրերին հատուկ բնութագրերին և հավանական ազդեցությանը միջավայրի վրա:

Կարևոր է նշել, որ ըստ նույն ՇՄԱԳ դիրեկտիվի՝ ԵՄ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ ՇՄԱԳ գործընթացում հավաքագրված ցանկացած տեղեկատվություն հասանելի լինի հանրությանը և հաշվի առնվի որոշումների կայացման գործընթացում: ՇՄԱԳ գործընթացում հավաքագրվող տեղեկատվությունը ներառում է իրավասու մարմիններին տրամադրված հիմնական հաշվետվությունները և խորհրդատվական եզրակացությունները այն պահին, երբ շահագրգիռ հանրությունը նույնպես տեղեկացվում է, ինչպես նաև այն տեղեկատվությունը, որը հասանելի է դառնում շահագրգիռ հանրությանը տեղեկացնելուց հետո միայն, կամ ցանկացած տեսակի այլ տեղեկատվություն: Անհրաժեշտ է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ ապահովելու, որ այդ տեղեկատվությունը հանրությանը հասանելի լինի էլեկտրոնային եղանակով՝ առնվազն մեկ կենտրոնացված

հարթակում կամ արագ հասանելի հղումներով՝ ըստ համապատասխան վարչական մակարդակի: ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ շահագրգիռ հանրության հետ խորհրդակցությունների համար սահմանված ժամկետները չպետք է լինեն 30 օրից պակաս:

Իշխանությունների մոտ առկա և որոշում կայացնելու համար նշանակություն ունեցող տեղեկատվության ողջ ծավալը պետք է բաց լինի հանրության առջև՝ անկախ նրանից՝ պետական մարմինը այն համարում է ճշգրիտ, համապարփակ կամ վերջին թարմության, թե՞ ոչ: Պետական մարմինները պետք է դիտարկեն նվազագույն տեղեկատվական փաթեթ սահմանելու հնարավորությունը՝ այնպիսի ծավալով, որը նշանակալի է որոշումների կայացման գործընթացի համար: Ըստ Օրհուսի կոնվենցիայի շրջանակում հանրության մասնակցության վերաբերյալ մշակված Մասատրիխտի հանձնարարականների՝ թեև ծանուցման մեջ պարտադիր չէ ներկայացնել տեղեկատվությունը ողջ մանրամասնությամբ, այնուամենայնիվ, նվազագույնը պետք է պահանջվի, որ ներկայացված տեղեկատվությունը ներառի առաջարկվող գործունեության թույլտվության հայտը և դրան կից հիմնական փաստաթղթերը, ներառյալ՝ ՇՄԱԳ փաստաթղթերը, ինչպես նաև պետք է համառոտ ներկայացնի, թե ուրիշ ինչ տեղեկություններ են հասանելի:

Նախնական լսումների ընթացքում ներկայացված տեղեկատվությունից անկախ՝ ՇՄԱԳ գործընթացի

շրջանակներում հանրային լուսմների վաղ փուլում հանրությանը ներկայացվող տեղեկատվության ծավալը և որակը պետք է բավարար լինեն նրա իրագեկ համաձայնությունը ստանալու կամ հիմնական մտահոգությունները հակիրճ ամփոփելու համար, որպեսզի միջավայրի վերաբերյալ որոշումների կայացմանը հանրությունը կարողանա նախապատրաստված լինել և մասնակցի արդյունավետորեն: Ընդհանուր առմամբ, պաշտոնապես հրապարակվող ՇՄԱԳ հաշվետվությունը պարունակում է ամբողջական տեղեկատվություն առաջարկվող ծրագրի սոցիալական և միջավայրի վրա ազդեցությունների վերաբերյալ՝ ներառյալ անուղղակի ազդեցությունները, կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ, մշտական և ժամանակավոր ազդեցությունները: Էքստերնալ ծախքերի (externalities) հաշվարկը և դրամական տեսքով ներկայացնելը, ինչպես նաև ծախսերի և օգուտների տնտեսական վերլուծությունը<sup>51</sup> չեն իրականացվում գնահատման ընթացքում կամ ՇՄԱԳ-ի հետագա փորձաքննության փուլում: Լավագույն պրակտիկայի համաձայն՝ հաշվետվությանը կցվում է նաև տեղեկատվության աղբյուրների և կիրառված մեթոդաբանությունների հղումների ցանկը:

---

<sup>51</sup> European Commission, Guide to Cost-Benefit Analysis of Investment Projects, Economic appraisal tool for cohesion policy 2014-2020  
[https://ec.europa.eu/regional\\_policy/sources/studies/cba\\_guide.pdf](https://ec.europa.eu/regional_policy/sources/studies/cba_guide.pdf)

Ինչպես վերը նկարագրված է, համաձայն ՇՄԱԳ դիրեկտիվի 6-րդ հոդվածի՝ ՇՄԱԳ-ի ենթակա նախագծի վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը պետք է էլեկտրոնային եղանակով հասանելի լինի հանրությանը՝ առնվազն մեկ կենտրոնացված հարթակի կամ հեշտությամբ հասանելի հղումների միջոցով՝ համապատասխան վարչական մակարդակում: Հանրային քննարկումների կազմակերպման պատասխանատու վարչական մարմինը կարող է լինել թե՛ համայնքային, թե՛ պետական մակարդակի, ներառյալ շահագրգիռ համայնքների ՏԻՄ-երը և ՇՄԱԳ իրականացնող իրավասու մարմինը: Հասարակությունն ունի միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում վաղ և արդյունավետ մասնակցության իրավունք՝ հանրային լսումների յուրաքանչյուր փուլում, երբ որևէ որոշում դեռևս ընդունված չէ, և բոլոր տարբերակները, ներառյալ՝ ծրագիրը մերժելու տարբերակը, դեռ բաց են: Հանրությանը տրամադրվող տեղեկատվության ծավալը պետք է նույնը լինի, ինչ ներկայացվում է ՇՄԱԳ փորձաքննություն իրականացնող իրավասու մարմնին: Լավ օրինակ է այն, երբ հանրությանը հնարավորություն է տրվում մասնակցել ինչպես ՇՄԱԳ-ի նախնական գնահատման (screening), այնպես էլ ազդեցության ծավալների սահմանման (scoping) փուլերին, երբ որոշվում են այն հիմնական հարցերը, որոնք պետք է հետազայում մանրակրկիտ ուսումնասիրվեն:

Թեև տեղեկատվություն տրամադրելու համար պատասխանատու մարմինները կարող են տարբեր լինել

գործընթացի տարբեր փուլերում, անհրաժեշտ է, որ արդյունքը լինի նույնը՝ հանրությունը պետք է առանց խտրականության հասանելիություն ունենա տեղեկատվությանը: Իրավասու վարչական մարմինները պետք է մանրամասն միջոցներ ձեռնարկեն հանրությանը գալիք լսումների մասին ծանուցելու համար՝ համաձայն ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվում նշված կարգի: Ծանուցման ձևերը պետք է համապատասխանեն շահագրգիռ հանրություն հանդիսացող մարդկանց խմբերի կարիքներին: Դրա հիման վրա կարող են կիրառվել ծանուցման տարբեր մեթոդներ: Հանրային ազդագրերը պետք է տարածվեն տարբեր եղանակներով՝ հեռահաղորդակցության միջոցներով, հայտարարությունների փակցմամբ հանրային վայրերում, ինչպես նաև անձնական հաղորդակցության միջոցներով՝ օրինակ՝ էլ. փոստով կամ հեռախոսային հաղորդագրություններով: Մասատրիխտի հանձնարարականներում մեջբերված լավագույն փորձը ներառում է անհատական ծանուցման համակարգի ապահովումը, որը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր քաղաքացու նախապես հեշտորեն գրանցվել մի համակարգում, որը հետագայում նրան ծանուցումներ կուղարկի:

Լուսնդում փորձագետների աշխատաժողովի<sup>52</sup> ժամանակ ընդգծվեց, որ կրիտիկական հանքահումքի ծրագրերում հանրության մասնակցությունը հաճախ թույլ է, համայնքներն իրենց իրավունքների մասին հաճախ անտեղյակ են, իսկ իշխանությունները չունեն բնապահպանական օրենսդրությունը փաստացի կիրարկելու բավարար կարողություններ: Գլխավոր խնդիրներից են ոչ վստահելի ՇՄԱԳ-երը, Կրիտիկական հանքահումքի մասին ակտի շրջանակում տրվող թույլտվությունների ոչ թափանցիկ գործընթացները, սահմանափակ տեխնիկական աջակցությունը, ինչպես նաև բնիկ ժողովուրդների և մարդկանց սոցիալական իրավունքների անբավարար ճանաչումը: Նույնիսկ այն դեպքերում, երբ առկա են ԵՄ շրջանակային գործիքներ, ինչպիսիք են՝ ՇՄԱԳ դիրեկտիվը, Արդյունաբերական արտանետումների դիրեկտիվը և Ջրի շրջանակային դիրեկտիվը, ներգրավվածությունը հաճախ սահմանափակ է լինում, իսկ իրավական համակարգերի համահունչությունն՝ անհավասար: Մասնակիցները շեշտեցին, որ մասնակցությունը պետք է լինի ավելի ուժեղ, սկսվի ավելի վաղ փուլից և լինի ավելի ներառական, որպեսզի համայնքները հասանելիություն ունենան հստակ տեղեկատվությանը, կրթությանը, հաշվետվողականությանը

<sup>52</sup> «ԵՄ-ում և Արևելյան գործընկերության երկրներում շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման մեջ հանրության արդյունավետ մասնակցություն» խորագրով աշխատաժողով, 2025 թ. մայիսի 13

մեխանիզմներին և բովանդակալից ձևով ներգրավման հնարավորություններին:

**Ուղենիշ Բ.** Երաշխավորել ողջամիտ և բոլորին հասանելի ժամկետներ՝ կրիտիկական հանքահումքի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում տեղեկացված մասնակցության համար, որի ժամանակ հաշվի կառնվեն հնարավոր կարճաժամկետ և երկարաժամկետ ազդեցությունները:

Հանրային լսումների փուլերը կարող են տարբեր լինել. որոշ օրենսդրություններ սահմանում են ֆիքսված կամ նվազագույն ժամկետներ յուրաքանչյուր փուլի համար, մինչդեռ այլ դեպքերում կիրառվում է ավելի ճկուն մոտեցում: Հանրության մասնակցության համար օրենսդրություն մշակելիս կարևոր է սահմանել «ողջամիտ ժամկետներ» հասկացությունը՝ համաձայն Օրհուսի կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի: Ավելին, Մասստրիխտի հանձնարարականներում նշված է, որ ընթացակարգային կարգավորումները պետք է հաշվի առնեն առաջարկվող գործունեության բնույթը, բարդությունը, ծավալը և հնարավոր ազդեցությունները բնական միջավայրի վրա: Քանի որ թե՛ պետական մարմինները, թե՛ հանրությունը սահմանափակ ժամանակ և ռեսուրսներ ունեն, գործիքների և մեթոդների ընտրության մեջ ճկունությունն օգնում է

բարձրացնել գործընթացին հանրության մասնակցության արդյունավետությունը: Հանրության մասնակցությունն ապահովող գործընթացն իրականացնելիս թե՛ իրավասու մարմինները, թե՛ հանրությունը պետք է հասկանան դրանպատակը: Այս գործընթացի բոլոր փուլերի համար պետք է նախատեսվի բավարար ժամանակ, ներառյալ հանրության կարծիքները հավաքագրելու և դրանք հաշվի առնելու համար: Նախատեսված ժամանակահատվածը պետք է բավական երկար լինի, որպեսզի հանրությունը հնարավորություն ունենա պահանջելու լրացուցիչ տեղեկատվություն և ներկայացնելու մեկնաբանություններ: Սա նաև նշանակում է, որ ժամկետները պետք է հնարավորություն տան, որպեսզի իրավասու մարմինները պատշաճորեն հաշվի առնեն հանրության մասնակցության արդյունքները և հանրությանը այդ մասին տեղեկացնեն: Պետք է ձեռնարկվեն միջոցներ կանանց մասնակցության խոչընդոտները վերացնելու ուղղությամբ՝ օրինակ՝ ընտրելով նրանց հարմար ժամանակ, վայր, հաշվի առնելով երեխայի խնամքի, տեղեկատվության հասանելիության խնդիրները: Անհրաժեշտ է նաև ապահովել տեղեկատվության մատչելի ձևաչափեր, թիրախային իրազեկում և կարողությունների զարգացում, որպեսզի տարբեր փորձառությամբ կանայք և ներկայացվածությունից զուրկ խմբերի այլ ներկայացուցիչներ նույնպես կարողանան արդյունավետորեն մասնակցել հանրային լուսմների գործընթացի բոլոր փուլերին:

Որպեսզի հանրությունը կարողանա խորհրդակցել և բնական միջավայրի ու մարդկանց կենսապահովման վրա հանքարդյունահանման ծրագրի հնարավոր զգալի ազդեցություններն ըմբռնի, անհրաժեշտ է պատշաճ ժամանակ: ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվով պահանջվում է, որ ՇՄԱԳ-երը յուրաքանչյուր կոնկրետ դեպքի համատեքստում պատշաճորեն բացահայտեն, նկարագրեն և գնահատեն ծրագրի ուղղակի և անուղղակի էական ազդեցությունները, մասնավորապես՝ (ա) բնակչության և նրանց առողջության վրա, (բ) կենսաբազմազանության վրա՝ հատուկ ուշադրություն դարձնելով Հաբիտատների և Թռչունների դիրեկտիվներով պաշտպանված տեսակներին և ապրելավայրերին, (գ) հողատարածքների, հողի, ջրի, օդի և կլիմայի վրա, (դ) նյութական արժեքների, մշակութային ժառանգության և լանդշաֆտի վրա, (ե) ինչպես նաև այս բոլոր գործոնների փոխազդեցող համակցության վրա, ներառյալ՝ այն ազդեցությունները, որոնք պայմանավորված են ծրագրի խոցելիությամբ՝ պայմանավորված խոշոր վթարների և/կամ աղետների ռիսկերով:<sup>53</sup> Իր հերթին, նախաձեռնողը պետք է ներկայացնի ՇՄԱԳ հաշվետվություն, որը պետք է անդրադառնա ծրագրի նկարագրությանը և բնական միջավայրի վրա դրա հնարավոր էական ազդեցություններին և հանձնի ՇՄԱԳ-ն ուսումնասիրող/փորձաքննող իրավասու մարմնին՝ ՇՄԱԳ դիրեկտիվի 4-րդ հոդվածի 4-րդ կետի

---

<sup>53</sup> Directive 2014/52/EU of the European Parliament and of the Council of 16 April 2014 amending Directive 2011/92/EU on the assessment of the effects of certain public and private projects on the environment Text with EEA relevance, Article 3 <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0052>

համաձայն: Ինչ վերաբերում է որոշումների կայացման տարբեր փուլերում հանրության արդյունավետ նախապատրաստման և մասնակցության համար համապատասխան ժամկետների սահմանմանը, ապա Մասսոբիխտի հանձնարարականները նշում են վեցշաբաթյա ժամկետ՝ ծրագրի փաստաթղթերը ուսումնասիրելու և հանրային լուսմաներին պատրաստվելու համար, ինչպես նաև լրացուցիչ վեցշաբաթյա ժամկետ՝ միջավայրի վրա և սոցիալական ազդեցության հարցերի վերաբերյալ կարծիքներ կամ մեկնաբանություններ ներկայացնելու համար: Այսպիսի ժամկետներն են համարվում ողջամիտ:<sup>54</sup> Ըստ ՇՄԱԳ դիրեկտիվի 6 հոդվածի 7-րդ կետի՝ շահագրգիռ հանրության հետ ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ լուսման ժամկետը չի կարող լինել 30 օրից պակաս: ՇՄԱԳ դիրեկտիվը չի սահմանում հանրային լուսման առավելագույն ժամկետ: Սակայն Կրիտիկական հանքահումքի մասին ակտի 12-րդ հոդվածի 5-րդ կետը նախատեսում է, որ ռազմավարական ծրագրերի դեպքում շահագրգիռ հանրության հետ ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ լուսման ժամկետը չպետք է գերազանցի 85 օրը և չպետք է լինի 30 օրից կարճ: Բացառիկ դեպքերում հնարավոր է մինչև 40 օրով ժամկետի

---

<sup>54</sup> UNECE Maastricht Recommendations on Promoting Effective Public Participation in Decision-making in Environmental Matters, պատրաստված Օփուսի կոնվենցիայի շրջանակներում, [https://unece.org/sites/default/files/2022-10/1514364\\_E\\_web.pdf](https://unece.org/sites/default/files/2022-10/1514364_E_web.pdf)՝ Տե՛ս նաև կոնվենցիայի համապատասխանության կոմիտեի կոմյունիկե թիվ ACCC/C/2007/22՝ Ֆրանսիայի կողմից կոնվենցիայի կատարման մասին (ECE/MP.PP/C.1/2009/4/Add.1), para.

երկարաձգում: Նման ժամկետները համահունչ են Մասսոբիխտի հանձնարարականներին:

Ինչ վերաբերում է ՇՄԱԳ գործընթացի վերջնարդյունքին, ապա ՇՄԱԳ դիրեկտիվը նախատեսում է, որ ՇՄԱԳ-ի վերաբերյալ իրավասու մարմնի եզրակացությունը պետք է տրվի հնարավորինս շուտ և ոչ ուշ, քան նախաձեռնողի կողմից ողջ տեղեկատվությունը ներկայացնելուց հետո 90 օրն է: Բացառիկ դեպքերում՝ կախված, օրինակ՝ ծրագրի բնույթից, բարդությունից, տեղակայումից կամ ծավալներից, իրավասու մարմինը կարող է երկարաձգել եզրակացություն տալու ժամկետը: ՇՄԱԳ դիրեկտիվը չի սահմանում և սահմանափակում լրացուցիչ անհրաժեշտ օրերի քանակը: Սակայն Կրիտիկական հանքահումքի մասին ակտը բացառիկ դեպքերում երկարաձգման համար սահմանում է առավելագույնը 20 օր ժամկետ, այն էլ՝ կախված յուրաքանչյուր դեպքից:

Ըստ Կրիտիկական հանքահումքի մասին ակտի 10-րդ հոդվածի 4-րդ կետի՝ ԵՄ ռազմավարական ծրագրերին պետք է տրվի հնարավորինս բարձր «ազգային նշանակության» կարգավիճակ, եթե այդպիսի կարգավիճակ նախատեսված է սվյալ երկրի ազգային օրենսդրությամբ, և այդ կարգավիճակով էլ պետք է անցկացվի թույլտվությունների տրամադրման գործընթացը: ԵՄ և երրորդ երկրներում՝ միջավայրի վրա ազդեցություններին կամ համապատասխան պարտավորություններին վերաբերող օրենսդրական առկա

կարգավորումների կապակցությամբ Կարգը (Regulation) ռազմավարական ծրագրերի վերաբերյալ որոշումների կայացման համար սահմանում է նոր ընթացակարգեր և ժամկետներ: Ընդհանուր առմամբ, ԵՄ-ում ռազմավարական ծրագրերի համար թույլտվությունների տրամադրման գործընթացը չպետք է գերազանցի 27 ամիսը՝ հանքարդյունահանման դեպքում (և հնարավոր է երկարաձգում մինչև 6 ամսով), իսկ միայն հանքանյութի մշակման (processing) կամ վերամշակման (recycling) պարագայում՝ 15 ամիսը՝ հնարավոր 3 ամսով երկարաձգմամբ՝ համաձայն 11-րդ հոդվածի 1-ին կետի:<sup>55</sup>

Թեև Կրիտիկական հանքահումքի մասին ակտով սահմանված ժամկետներն ու ՇՄԱԳ ընթացակարգերը համահունչ են ԵՄ գործող իրավական կարգավորումներին, հանքարդյունահանման լիցենզիաների տրամադրման համար նախատեսված ժամանակի զգալի կրճատումը ռիսկեր է ստեղծում՝ հատկապես բնիկ ժողովուրդների և գյուղացիական համայնքների համար: Այս մոտեցումը սահմանափակում է նրանց կարողությունը՝ պատշաճ կերպով բարձրացնելու հանքարդյունաբերական գործունեության հետ կապված այն մտահոգությունները, որոնք վերաբերում են իրենց իրավունքներին, մշակույթին և միջավայրին: Ըստ ընդունված

---

<sup>55</sup> European Union. (2024, April 11). *Regulation (EU) 2024/1252 of the European Parliament and of the Council establishing a framework for ensuring a secure and sustainable supply of critical raw materials and amending Regulations (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1724 and (EU) 2019/1020* (OJ L, 3 May 2024). CRMA, Article 11(1-4), տե՛ս այստեղ՝ <https://eur-lex.europa.eu/eli/reg/2024/1252/oj/eng>

պրակտիկայի, լիթիումի հանքավայրի հետախուզումից մինչև արդյունաբերական արտադրություն անցնում է միջինը յոթ տարի, իսկ պղնձի հանքավայրի դեպքում՝ մոտ 17 տարի:<sup>56</sup> Ժամկետների կրճատումը մինչև 27 ամիս (բացառիկ դեպքերում՝ առավելագույնը ևս 6 ամսով երկարաձգմամբ), ինչպես սահմանված է վերը նշված ԵՄ ակտով, կարող է բավարար ժամանակ չընձեռել ծրագրերի փաստացի կամ պոտենցիալ ազդակիր բնակչությանը, որպեսզի նրանք լիարժեք տեղեկացված լինեն և բովանդակալից մասնակցություն ունենան: Սա հատկապես բարդ է՝ հաշվի առնելով փաստաթղթերի՝ տեխնիկապես և լեզվական առումով բարդ բնույթը, ինչպես նաև հանքարդյունաբերական ծրագրերի կուտակային ազդեցությունները, ինչպես նաև իրար հետ փոխազդության մեջ գտնվող մյուս բոլոր գործոնների համակցված ազդեցությունները:

---

<sup>56</sup> *Copper Mines: Average Time from Discovery to Production is 17.9 Years*, տե՛ս այստեղ՝ <https://www.miningvisuals.com/post/copper-mines-average-time-from-discovery-to-production-is-17-9-years>

Սույն օրինակելի ուղենիշների մշակմանը նպաստելու նպատակով 2024 թվականի սեպտեմբերի 22-ին կազմակերպված՝ «Հանրության մասնակցությունը շրջակա միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում. Օրհուսի կոնվենցիայի կիրարկում» խորագրով աշխատաժողովի ընթացքում քննարկվեց նաև Կրիտիկական հանքահումքի մասին ակտի շրջանակում հանրության մասնակցության հարցը:<sup>57</sup> Հնչեցին մտահոգություններ այն մասին, որ ռազմավարական ծրագրերի կարգավիճակի շնորհման վերաբերյալ որոշումները կայացվում են Եվրոպական հանձնաժողովի կողմից՝ հիմնվելով Կրիտիկական հանքահումքի խորհրդի (Critical Raw Materials Board) խորհրդատվության վրա, սակայն առանց հանրության մասնակցության որևէ պաշտոնական մեխանիզմի և սահմանափակ տեղեկատվության հասանելիության պայմաններում:

Ամփոփելով կարող ենք ասել, որ ԵՄ օրենսդրության համաձայն, հանքարդյունահանող ընկերությունների կողմից նախաձեռնված և կազմակերպված նախնական հանրային լուսմները, որոնք նպատակ ունեն ներկայացնելու ծրագրի հնարավոր բացասական ազդեցությունները, չեն ներառվում ՇՄԱԳ-ի իրականացման համար օրենքով նախատեսված

---

<sup>57</sup> EUR Lex 2024

ընդհանուր ժամկետում: Այս նախնական լուումների համար ժամկետներ սահմանված չեն: ՇՄԱԳ հաշվետվության պատրաստման ժամանակահատվածը, ինչպես նաև հանքարդյունաբերական ընկերությունների կողմից նախաձեռնված նախնական հանրային լուումները չեն ընդգրկվում թույլտվությունների տրամադրման կամ հանրային լուումների՝ օրենսդրությամբ սահմանված՝ ժամկետներում: Այս դրույթը վերաբերելի է նաև Կրիտիկական հանքահումքի մասին ակտի շրջանակում ռազմավարական ծրագրերին:<sup>58</sup> ԵՄ օրենսդրությունը սահմանում է ժամկետներ հանքարդյունահանող ընկերության կողմից իրավասու մարմնին ՇՄԱԳ հաշվետվությունը և հավելյալ փաստաթղթերը փորձաքննության հանձնելուց հետո, որպեսզի հանրությունը դրանք ուսումնասիրի և կարծիք հայտնի:

**Ուղենիշ 9.** Ապահովել մասնակցությունն վաղ փուլում, երբ որևէ որոշում դեռևս կայացված չէ, և բուր, այդ թվում՝ մերժման, տարբերակները դեռևս բաց են, ինչպես նաև ստանալ կրիտիկական հանքահումքի պոտենցիալ ծրագրերի ազդակիր համայնքների ազատ, նախապես և տեղեկացված համաձայնությունը:

Ըստ ՇՄԱԳ դիրեկտիվի 6-րդ հոդվածի (4) մասի՝ շահագրգիռ հանրությանը պետք է տրվեն վաղ և արդյունավետ հնարավորություններ՝ մասնակցելու միջավայրի վերաբերյալ

---

<sup>58</sup> CMRA, Article 11(3)

որոշումների կայացման գործընթացներին և իրավունք՝ արտահայտելու իր կարծիքները մինչև նախաձեռնվող ծրագրի թույլտվությունների վերաբերյալ որոշման կայացումը:<sup>59</sup> Մասստրիխտի հանձնարարականներում նշվում է, որ որոշումների կայացման գործընթացում պետք է լինի առնվազն մեկ փուլ, երբ հանրությունը կարող է արդյունավետորեն մասնակցել այն հարցի քննարկմանը՝ արդյո՞ք առաջարկվող գործունեությունը պետք է ընդհանրապես իրականացվի, թե՞ ոչ (այսպես կոչված՝ «գրոյական տարբերակը»): Բացի դրանից, համաձայն նույն հանձնարարականների՝ պետական մարմինները պետք է նախաձեռնողին խրախուսեն երխուսել շահագրգիռ հանրության հետ և տրամադրել ճշգրիտ ու հուսալի տեղեկատվություն՝ մինչև ՇՄԱԳ պաշտոնական փորձաքննության և թույլտվության դիմելը: Հանրության մանիպուլյացիան, հարկադրանքը կամ համայնքների միջև կոնֆլիկտների հրահրումը ակնհայտորեն հակասում են միջազգային մարդու իրավունքներին և պատշաճ համալիր գնահատման (due diligence) սկզբունքին:

Մասստրիխտի հանձնարարականները նաև ընդգծում են, որ հանրության որոշ անդամներ կարող են ցանկություն ունենալ մասնակցելու, սակայն իրականում չկարողանան, օրինակ՝ խոցելի կամ լուսանցքավորված խմբերը, ինչպիսիք են՝ կանայք, երեխաները, տարեցները, միգրանտները, հաշմանդամություն ունեցող անձինք, ցածր գրագիտություն

---

<sup>59</sup> EIA Directive, Article 6(4)

ունեցողները կամ լեզվական խոչընդոտներ ունեցողները, ինչպես նաև ազգային, կրոնական փոքրամասնությունները և սոցիալապես անապահով խմբերը: Նշվում է, որ անհրաժեշտ է քայլեր ձեռնարկել՝ հաղթահարելու նրանց մասնակցությանը խոչընդոտող բոլոր արգելքները, ինչը ենթադրում է, ի թիվ այլ քայլերի, ապահովել տեղեկատվության անխոչընդոտ հասանելիությունը, պատրաստել ոչ տեխնիկական ամփոփագրեր պարզ և հասկանալի լեզվով, տրամադրել տեղեկատվություն բոլոր շահագրգիռ կողմերի համար հասանելի լեզուներով և ձևաչափերով, ինչպես նաև տալ հարցեր հղելու և պարզաբանումներ ստանալու հնարավորություն՝ մինչև հանրային լուսմները և դրանց ընթացքում: Բացի դրանից, անհրաժեշտ է ապահովել, որ ընթացակարգերում կատարվող փոփոխությունների մասին հաղորդվի նախապես, և հանրության մասնակցության համար լրացուցիչ խոչընդոտներ չստեղծեն:

Ըստ ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվի՝ «Շահագրգիռ հանրությանը պետք է տրվեն վաղ և արդյունավետ հնարավորություններ՝ մասնակցելու միջավայրի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացին և այդ նպատակով ունենալու իրավունք՝ իրավասու մարմին կամ մարմինների և ներկայացնելու կարծիքներ ու դիրքորոշումներ այն փուլում, երբ բոլոր տարբերակները դեռ բաց են՝ նախքան ծրագրի թույլտվության վերաբերյալ որոշման կայացումը»:<sup>60</sup> Բացի այդ,

---

<sup>60</sup> European Parliament & Council. (2003, May 26). Directive 2003/35/EC providing for public participation in respect of the drawing up of certain plans and programmes relating to the

ՇՄԱԳ դիրեկտիվը և ԵՄ օրենսդրական դաշտի այլ տարրերը նախատեսում են հանրության իրավունքը՝ նախաձեռնելու որոշման վերանայման ընթացակարգ դատարանում կամ այլ անկախ և անաչառ մարմնում՝ հնարավորություն ունենալով վիճարկելու այն որոշումների, գործողությունների կամ անգործությունների նյութական (բովանդակային) կամ ընթացակարգային օրինականությունը, որոնք ենթակա են եղել հանրային մասնակցության: Այս իրավունքը դիտվում է որպես մարդու իրավունքների ավելի լայն շրջանակի մաս, որն ուղղված է միջավայրի վերաբերյալ կենսակայուն որոշումների կայացման ապահովմանը: Կարևոր է նշել, որ ԵՄ-ի կողմից մշակված՝ «ՇՄԱԳ նախնական գնահատման (screening), ծավալների սահմանման (scoping) և հաշվետվության կազմման մասին ուղեցույցը»,<sup>61</sup> ինչպես նաև «Կլիմայի փոփոխությունը և կենսաբազմազանությունը ՇՄԱԳ-ում ներառելու մասին ուղեցույցը» նպաստում են, որ խթանվի ՇՄԱԳ դիրեկտիվի և IV հավելվածի ներքո ՇՄԱԳ փորձաքննության ենթակա ծրագրերի դեպքում հանրության մասնակցության լավագույն պրակտիկան:

ՏՀԶԿ «Պատշաճ համալիր գնահատման վերաբերյալ ուղեցույցը» (Due Diligence Guidance) ընդգծում է շահագրգիռ կողմերի ներգրավման անհրաժեշտությունը ծրագրերի

---

environment and amending, with regard to public participation and access to justice, Council Directives 85/337/EEC and 96/61/EC. Official Journal of the European Union, L 156, 17–25.

<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32003L0035>

<sup>61</sup> European Commission, Environmental Impact Assessment, Guidance documents

[https://environment.ec.europa.eu/law-and-governance/environmental-assessments/environmental-impact-assessment\\_en](https://environment.ec.europa.eu/law-and-governance/environmental-assessments/environmental-impact-assessment_en)

պլանավորման և ընթացիկ գործունեության փուլերում՝ որոշումների կայացման իրավասությունը շահագրգիռ և ազդակիր կողմերի հետ կիսելու նկատառմամբ: ՏՀԶԿ ուղեցույցի շրջանակում «պատշաճ համալիր գնահատում» հասկացությունը դիտարկվում է որպես գործընթաց, որի միջոցով ձեռնարկությունները բացահայտում, կանխում և մեղմում են իրական և պոտենցիալ բացասական ազդեցությունները և ներկայացնում են իրենց հանձնառություններն այն մասին, թե ինչպես են պատրաստվում լուծել այդ ազդեցությունների հետ կապված հարցերը: Պատշաճ համալիր գնահատումը համարվում է որոշումների կայացման և ռիսկերի կառավարման համակարգերի անբաժանելի մասը, և բոլոր ձեռնարկությունները՝ անկախ իրենց չափից և գործունեության բնույթից, պարտավոր են իրականացնել այն: ՏՀԶԿ ուղեցույցը նաև ընդունում է, որ շահագրգիռ կողմերը միատարր խումբ չեն, և խորհուրդ է տալիս բացահայտել ու ներգրավել ազդակիր համայնքների առանձին խմբերին, այդ թվում՝ կանանց, որպեսզի ապահովվի նրանց տեսակետների լսելիությունը: Այն հանձնարարում է հաղթահարել մշակութային, կազմակերպական և սոցիալ-տնտեսական խոչընդոտները, որոնք կարող են սահմանափակել այդ խմբերի մասնակցությունը, և ապահովել, որ ներգրավման գործընթացները հաշվի առնեն այն տարբերակված ազդեցությունները, որոնք նրանք կարող են կրել: Ուղեցույցը ներկայացնում է գործընթացների և քայլերի համառոտ ակնարկ, որոնցով ապահովվում է շահագրգիռ կողմերի

ներգրավման բուն նպատակի արդունավետ իրականացումը, այն է՝ խուսափել բացասական ազդեցություններից և հասցեագրել դրանք:

Ըստ որոշ պետությունների ներքին օրենսդրությունների՝ ազդակիր համայնքները (շահագրգիռ հանրությունը) ունեն նախնական համաձայնություն տալու կամ մերժելու հնարավորություն: Հայաստանի Հանրապետության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի<sup>62</sup> համաձայն՝ հանրային լուսմները անցկացվում են երկու փուլով՝ **նախնական համաձայնության փուլ** և **փորձաքննության փուլ**: Նախնական համաձայնության փուլում համայնքը ունի տվյալ գործունեությանն իր նախնական համաձայնությունը տալու կամ չտալու հնարավորություն (Գնահատման փուլ), իսկ փորձաքննության փուլում՝ լիազոր պետական մարմինը ՇՄԱԳ հաշվետվության հիման վրա կայացնում է որոշում (Փորձաքննության փուլ): Եթե համայնքի դիրքորոշումը բացասական է, ՇՄԱԳ գործընթացը դադարեցվում է: Այս կարգավորումը հիմնված է տեղական ինքնակառավարման սկզբունքի և համայնքի բնակիչների՝ իրենց զարգացման առաջնահերթությունները որոշելու իրավունքի վրա: Նույն կարգավորմամբ «համայնք» տերմինը դիտվում է որպես համայնքային մարմին (համայնքի ավագանի), ինչը

---

<sup>62</sup> «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք, ընդունվել է 2014 թ. հունիսի 21-ին, փոփոխվել 2023 թ. մայիսի 3-ին, <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=178468>

նշանակում է, որ համայնքի անդամները շարունակում են պահպանել Օրհուսի կոնվենցիայով նախատեսված՝ հանրության մասնակցության բոլոր իրավունքները: Կարևոր է ապահովել, որ կանայք, տղամարդկանց հետ հավասար հիմունքներով, կարողանան արդյունավետ և բովանդակալից մասնակցություն ունենալ ծրագրերին համաձայնություն տալու այս գործընթացներին, և նրանց տեսակետները արտացոլվեն ՏԻՄ որոշումներում, հատկապես այն դեպքերում, երբ դրանց կազմը չունի գենդերային հավասարակշռություն:

### **Ուղենիշ 7. Ստեղծել ապահով և թափանցիկ մեխանիզմներ կրիտիկական հանքահումքի կառավարման վերաբերյալ հանրության կարծիքի հավաքագրման, ներառման և դրան արձագանքման համար**

Համաձայն ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվի 8-րդ հոդվածի՝ «*Հումաների (խորհրդակցությունների) արդյունքները և 5-ից 7-րդ հոդվածների համաձայն հավաքագրված տեղեկությունները պետք է հավուր պատշաճի հաշվի առնվեն նախաձեռնվող գործունեության համար համաձայնության տրամադրման ընթացակարգում*»: Սա ըստ էության նշանակում է, որ իշխանության մարմինների կողմից ընդունվող որոշումները պետք է պատշաճ կերպով արտացոլեն հանրային քննարկումների և ուսումնասիրությունների/փորձաքննությունների արդյունքները: Այս պահանջը հանդիսանում է միջավայրի հետ

կապված մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության հիմնական ցուցիչներից մեկը: Սովորաբար, հանրության մասնակցությունը կարող է իրականացվել կա՛մ անձամբ՝ իրավասու մարմինների և նախաձեռնողի կողմից կազմակերպվող հանրային լուսմների մասնակցելով, կա՛մ գրավոր դիտարկումներ ներկայացնելով իրավասու մարմին: Հնարավոր են նաև մասնակցության այլ ձևեր, օրինակ՝ տեղեկատվական հարցումները կամ հանրային բանավեճերի կազմակերպումը: Կարևոր է նշել, որ ընդունվող որոշումների հիմնավորվածությունն ու օրինականությունն ապահովելու համար իրավասու պետական մարմինները պարտավոր են երաշխավորել, որ հանրության մասնակցության գործընթացը կազմակերպվի ընթացակարգային պահանջներին համապատասխան՝ ապահովելով ծանուցման և նախապատրաստական աշխատանքների պատշաճ ժամկետները, ներկայացվող տեղեկատվության ամբողջականությունն ու վստահելիությունը, խտրականության բացառումը բոլոր մասնակիցների հանդեպ, ինչպես նաև հանրային լուսմների կազմակերպիչների կողմից մասնակիցների հետ իրենց իրավունքների մասին պատշաճ բացատրական աշխատանքները:

Հանրային լուսմներ կազմակերպելիս կազմակերպող կառույցը պետք է հստակեցնի դրանց նպատակը, հանրային լուսմների ընթացակարգի համաձայն մասնակիցների իրավունքները, ինչպես նաև դրանցից բխող հնարավոր արդյունքները, այդ թվում՝ բանավոր կամ գրավոր մեկնաբանություններ

ներկայացնելու իրավունքը, իրավասու մարմնի կողմից հանրության մասնակցության արդյունքների հավուր պատշաճի հաշվի առնելը, ինչպես նաև հանրային մասնակցության ենթակա որոշումները, գործողությունները կամ անգործությունը նյութապես կամ ընթացակարգային տեսանկյունից վիճարկելու իրավունքը: Մա վերաբերում է թե՛ այն տեղեկատվությանը, որը հրապարակվում է հանրային քննարկման ենթակա ծրագրի մասին ծանուցման ընթացքում, թե՛ հանրային քննարկումների փուլերում տրամադրվող տեղեկատվության որակին, թե՛ մեկնաբանություններ կամ հարցեր ներկայացնելու համար նախատեսված ժամկետներին և պատասխանատու անձանց կամ կառույցների կոնտակտային տվյալներին: Լսումների վերաբերյալ ծանուցումը պետք է հստակ ներկայացնի հանրության մասնակցության բոլոր հնարավոր ձևերն ու դրանց իրականացման համար նախատեսված ժամանակացույցը:

Հանրությունն իրավունք ունի ներկայացնելու ցանկացած դիտարկում, տեղեկատվություն, վերլուծություն կամ կարծիք, որոնք իր գնահատմամբ առնչվում են առաջարկվող գործունեությանը, և որոնք լսումների սկզբում կազմակերպող կողմը պետք է հստակ բացատրի և ներկայացնի: Դիտարկումներ, տեղեկատվություն, վերլուծություն և կարծիքներ ներկայացնելու իրավունքը վերապահված է «հանրությանը» ընդհանրապես, և ոչ միայն «շահագրգիռ հանրությանը», ինչը նշանակում է, որ հանրության մասնակցության ցանկացած փուլում անցկացվող հանրային

հանդիպումները, լսումները կամ հարցուպատասխանները պետք է բաց լինեն նաև հանրության բոլոր անդամների համար: Գրավոր դիտարկումներ ներկայացնելու համար պետք է սահմանվեն հստակ ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան հանրության ցանկացած անդամի ներկայացնելու իր դիտարկումները, և ոչ միայն նրանց, ում իրավասու մարմինը ճանաչել է որպես «շահագրգիռ հանրություն» (ազդակիր): Դիտարկումները կարող են ներկայացվել հանրության մասնակցության համար նախատեսված ամբողջ ժամանակահատվածում, այդ թվում՝ ՇՄԱԳ գործընթացի շրջանակներում կազմակերպվող հանդիպումներից, լսումներից, հարցուպատասխաններից առաջ, դրանց ընթացքում կամ դրանցից հետո: Դիտարկումները կարող են ներկայացվել նաև բանավոր՝ հանրային լսման ընթացքում: Արձանագրվում են ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր դիտարկումները:

Հանրային լսումը սկսելիս կազմակերպող մարմինը պետք է ներկայացնի ՇՄԱԳ գործընթացի էությունն ու նշանակությունը, կայացվելիք որոշումների տեսակն ու ժամկետները, հանրային լսման փուլերը և յուրաքանչյուր փուլի արդյունքում ընդունվելիք որոշումների բնույթը: Բացի այդ, անհրաժեշտ է պարզաբանել բանավոր կամ գրավոր դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնելու իրավունքը, ինչպես նաև իրավասու մարմնի պարտավորությունը՝ դրանք պատշաճ կերպով հաշվի առնելու որոշումների ընդունման ընթացքում:

Իրավակարգավորիչ շրջանակում պետք է հստակ ամրագրված լինի իրավասու պետական մարմնի պարտավորությունը՝ կրիտիկական հանքահումքի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացում պատշաճ կերպով հաշվի առնելու հանրության մասնակցության արդյունքները: Այս համատեքստում բավարար չէ, որ այդ պարտավորությունն ընդհանուր գծերով պարզապես արտացոլված լինի ՇՄԱԳ եզրակացության կամ ծրագրին թույլտվություն տալու որոշման մեջ: Օրիուսի կոնվենցիայի համաձայն՝ «հավուր պատշաճի հաշվի առնելու» պարտավորությունը պետք է մեկնաբանվի որպես հնարավորության ընձեռում հանրությանը, որ նրան հասանելի լինի որոշման տեքստը, ինչպես նաև դրան ուղեկցող հիմնավորումներն ու նկատառումները: Սա նշանակում է, որ որոշմանը կցվող հիմնավորման մեջ պետք է ներկայացվի, թե ինչպես է կազմակերպվել հանրության մասնակցության գործընթացը և ինչպես են դրա արդյունքները ներառվել որոշման մեջ: Հանձնարարելի է, որ իրավակարգավորումներում հստակ ամրագրվի պահանջ, ըստ որի՝ որոշման հիմնավորման մեջ առնվազն պետք է ներառվեն հետևյալ տարրերը.

- հանրության մասնակցության գործընթացի և դրա փուլերի նկարագրությունը,
- ստացված բոլոր դիտարկումները և մեկնաբանությունները,
- բացատրությունը, թե ինչպես են ներկայացված դիտարկումները և մեկնաբանությունները հաշվի

առնվել որոշման մեջ՝ հստակ նշելով, թե որոնք են ընդունվել վերջնական որոշման մեջ, որտեղ են դրանք արտացոլված, ինչու, իսկ որոնք չեն ընդունվել և ինչ պատճառներով:

Որոշման պատճառների հիմնավորումը պետք է հրապարակվի ՇՄԱԳ գործընթացի ավարտից հետո՝ վերջնական որոշման հետ միասին: Հանձնարարելի է հիմնավորման կազմման ընթացքում ստեղծել մի աղյուսակ, որտեղ կարձանագրվեն ստացված դիտարկումները և կներկայացվի, թե դրանցից յուրաքանչյուրն ինչպես է ազդել որոշման նախնական տարբերակի վրա: Եթե բացակայում են բավարար ապացույցներ, թե ինչպես են հանրության մասնակցության արդյունքները հաշվի առնվել, ապա դա կարող է դիտվել որպես «հավուր պատշաճի հաշվի առնելու» իրավական պահանջի էական խախտում՝ առաջացնելով այդ որոշման չեղարկման իրավական հիմք՝ համաձայն Մասսորիխտի հանձնարարականների:

2024 թվականի սեպտեմբերի 22-ին այս ուղենիշների մշակմանը նվիրված աշխատաժողովի ընթացքում քննարկվեցին նաև Կրիտիկական հանքահումքի մասին ակտի համատեքստում հանրության մասնակցության հարցերը,<sup>63</sup> ինչպես նաև ԵՄ տարածաշրջանային

<sup>63</sup> European Union. (2024, April 11). Regulation (EU) 2024/1252 of the European Parliament and of the Council establishing a framework for ensuring a secure and sustainable supply of

մակարդակի և պետական մակարդակի միջև փոխառնչություններն<sup>64</sup> ու մարտահրավերները: Մասնակիցները, տարբեր երկրների փորձի վրա հիմնվելով, առանձնացրին հանրության մասնակցությանը խոչընդոտող հիմնական խնդիրները, այդ թվում՝ միջավայրի վերաբերյալ տեղեկատվության սահմանափակ հասանելիությունը, ինստիտուցիոնալ կարողությունների թույլ մակարդակը և իշխանությունների ու հասարակության միջև վստահության պակասը: Հայաստանի և Վրաստանի օրինակների ուսումնասիրությունները ցույց տվեցին, թե ինչպես են այս խնդիրները դրսևորվում գործնականում: Ներկայացվեցին նաև 2024 թվականի տվյալներ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանից, որոնք օգտակար էին տարածաշրջանում հանքարդյունաբերության և մարդու իրավունքների համատեքստին ծանոթանալու համար: Տեղեկությունները ներառում էին 23 երկրներում անցումային հանքահումք արդյունահանող կամ մշակող ընկերությունների գործունեության արդյունքում բնապահպանական և մարդու իրավունքների առերևույթ խախտումների վերաբերյալ 249 դեպքեր: Այս առերևույթ խախտումների մեծ մասն ազդեցություն է թողել աշխատողների և տեղի համայնքների վրա:

---

critical raw materials and amending Regulations (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1724 and (EU) 2019/1020 (OJ L, 3 May 2024). CRMA, Article 11(1-4), տե՛ս՝ <https://eur-lex.europa.eu/eli/reg/2024/1252/oj/eng>

<sup>64</sup> Business & Human Rights Resource Centre. (2025, May 7). *Transition Minerals Tracker: 2025 global analysis*. <https://www.business-humanrights.org/en/from-us/briefings/transition-minerals-tracker-2025-global-analysis/>

Աշխատավայրում առողջության և անվտանգության պահպանման խախտումները կազմել են աշխատողների հետ կապված խնդիրների մոտ 85 տոկոսը, մինչդեռ համայնքների բողոքներում բարձրացվել են բնական միջավայրի հետ կապված հարցեր՝ ներառյալ օդի, հողի և ջրի աղտոտումը: Նախորդ տարիների համեմատ՝ բողոքի ակցիաների էական աճը՝ ավելի քան կրկնապատկումը, արտացոլում է գնալով մեծացող դժգոհությունը՝ պայմանավորված չվճարված աշխատավարձերով, վատ աշխատանքային պայմաններով և բնական միջավայրի դեգրադացիայով: Այս բոլոր հանգամանքները դիտարկվել են որպես իրավիճակներ, որոնք ըստ էության մարդու իրավունքների խախտումներ են: Ընդգծվել է վաղ, տեղեկացված և ներառական լուսմների գործընթացների անհրաժեշտությունը, որպեսզի ազդակիր համայնքները ներգրավված լինեն որոշումների կայացման բոլոր փուլերում: Քննարկումների ընթացքում առանձնացվել են արդար և կենսակայուն կանաչ անցման խթանման հիմնական ուղղությունները, ներառյալ՝ մարդու իրավունքների և շրջակա միջավայրի պատշաճ համալիր գնահատման (environmental due diligence) ամրապնդումը, համայնքների և աշխատողների հետ բովանդակալից համագործակցության ապահովումը և գանգատարկման մատչելի մեխանիզմների ստեղծումը, որոնք

Երաշխավորում են իրավունքի կամ վնասի վերականգնման (հատուցման) արդյունավետ միջոցներ (remedy):

Որպես ամփոփում՝ հանրային լսումները կազմակերպող տեղական կամ պետական մարմինները պարտավոր են հանրությանը տեղեկացնել իր իրավունքների մասին, որոնք առնվազն պետք է ներառեն՝ լսումների առարկայի մասին իրազեկվելու իրավունքը, վստահելի և ամբողջական տվյալներ ստանալու իրավունքը, պաշտոնապես հաստատված կարգով բանավոր կամ գրավոր դիտարկումներ ներկայացնելու իրավունքը, ինչպես նաև այն ակնկալիքը, որ իրավասու մարմինները հավուր պատշաճի հաշվի կառնեն ներկայացված դիտարկումները և կհասցեագրեն դրանք այնպես, որ երևա, թե կոնկրետ որտեղ են դրանք արտահայտվել: Հանրության մասնակցության ընթացքում կարևոր է նաև տրամադրել տեղեկատվություն այն մասին, թե ինչպես կարող է «շահագրգիռ հանրությունը» (ազդակիր), որպես իրավունքի սուբյեկտ, դատարանում վիճարկել կրիտիկական հանքահումքի համատեքստում հանրության մասնակցությանը ենթակա որոշումների, գործողությունների կամ անգործության օրինականությունը նյութական կամ ընթացակարգային մասով: Սա անհրաժեշտ է արդար կանաչ անցման համատեքստում արդարադատության հասանելիությունն ապահովելու համար:

**Ուղենիշ Ե.** Ապահովել, որ կրիտիկական հանքահումքի վերաբերյալ որոշումների կայացման գործընթացները լինեն տարբեր մարմինների միջև համակարգված, իրավաբանորեն հիմնավորված և ենթակա լինեն դատական վերանայման:

Օրհուսի կոնվենցիայի կողմ հանդիսացող բոլոր երկրները պարտավոր են նշանակել իրավասու մարմինների, որոնք պատասխանատու կլինեն շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման իրականացման համար: ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվի 5-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ իրավասու մարմինը պետք է երաշխավորի, որ ունի կամ կարող է այլ կերպ ապահովել բավարար մասնագիտական փորձագիտական ներուժ՝ ՇՄԱԳ հաշվետվությունները պատշաճ կերպով քննելու/փորձաքննելու համար:<sup>65</sup> Որոշումների կայացման գործընթացում ներգրավված տարբեր մարմինների դերերն ու պարտականությունները, ներառյալ՝ հանրության մասնակցության գործընթացի տարբեր փուլերի և գործողությունների համար պատասխանատու մարմինները, պետք է հստակ սահմանվեն և միմյանցից զատորոշվեն: Այն մարմինները, որոնց տվյալ ծրագիրը կարող է մտահոգել՝ իրենց կոնկրետ բնապահպանական պարտականությունների կամ տեղական և շրջանային իրավասության<sup>66</sup> պատճառով, պետք է հնարավորություն ունենան արտահայտելու իրենց կարծիքը: Այդ նպատակով ԵՄ անդամ պետությունները, օրինակ, պարտավոր են նշել այն մարմիններին, որոնցից նույնպես

---

<sup>65</sup> EIA Directive Article 5(3)(b)

<sup>66</sup> EIA Directive Article 6(1)

պետք է հայցվի կարծիք կամ նրանց հետ անցկացվի լսում կա՛մ ընդհանուր կարգով, կա՛մ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհատական հիմունքներով՝ ՇՄԱԳ դիրեկտիվի 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն:

Գործնականում ամբողջ ՇՄԱԳ գործընթացը, ներառյալ՝ նաև առանձին թույլտվությունների տրամադրման ընթացակարգերը, օրինակ՝ ջրի կամ օդի աղտոտման հետ կապված, իրականացվում են իրավասու (այդ թվում՝ գործիմաց) պետական մարմինների կողմից: Այս գործընթացի մեջ է մտնում նաև հանրության արդյունավետ ծանուցումը թե՛ լսումների վայրի և ժամանակի և թե՛ ծրագրի հնարավոր սոցիալական ու բնական միջավայրի վրա բացասական ազդեցությունների բովանդակության վերաբերյալ: Հանրային լսումների կազմակերպման և ՇՄԱԳ փորձաքննության իրականացման համար պատասխանատու պետական մարմինները պետք է ունենան համապատասխան գործիմացություն (կոմպետենտություն) և պատասխանատվություն կրեն գործընթացն արդյունավետորեն իրականացնելու համար՝ ՇՄԱԳ դիրեկտիվի 6-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին համապատասխան:

ՇՄԱԳ գործընթացներում ընդունվող որոշումների կապակցությամբ ՇՄԱԳ դիրեկտիվում կիրառվում է «հիմնավորված եզրակացություն» (reasoned conclusion) տերմինը: ՇՄԱԳ դիրեկտիվի 2-րդ հոդվածի (գ) կետի

համաձայն՝ ՇՄԱԳ-ի վերաբերյալ իրավասու մարմնի հիմնավորված եզրակացությունը պետք է ներառվի այն որոշման մեջ, որով տրվում կամ մերժվում է հանքարդյունաբերական գործունեության թույլտվությունը (համաձայնությունը), ներառյալ՝ որոշմանը կից բնապահպանական պայմանները՝ ինչպես սահմանված է ՇՄԱԳ դիրեկտիվի 8ա (1-2) հոդվածում: Եթե հանքարդյունաբերական գործունեությունը հաստատվում է, ապա որոշմանը կից պարտադիր կատարման ենթակա լրացուցիչ բնապահպանական պայմանները ևս պետք է ներառվեն հիմնավորված եզրակացության մեջ: Իրավասու մարմինը կարող է սահմանել ՇՄԱԳ եզրակացության գործողության կամ լրացուցիչ պայմանների կատարման ժամկետները:

Հանրային լուսմների գործընթացը կարող է բաղկացած լինել լուսմների ու քննարկումների մի շարք հաջորդական փուլերից, որոնց ավարտից հետո իրավասու մարմնի կողմից ընդունվում է ՇՄԱԳ հիմնավորված եզրակացությունը: Վերջնական որոշումը պետք է ընդունվի հանրային լուսմների բոլոր փուլերի ավարտից հետո: ՇՄԱԳ վերջնական եզրակացությունը հանդիսանում է առաջարկվող հանքարդյունաբերական գործունեության թույլատրման կամ մերժման հիմքը: Կարևոր է նշել, որ հանրության մասնակցության ենթակա որոշումների, գործողությունների կամ անգործության օրինականությունը նյութական կամ ընթացակարգային մասով կարող է ներպետական

օրենսդրության համաձայն վիճարկվել դատարանում կամ այլ իրավասու ատյաններում՝ ինչպես նախատեսված է ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվի 11-րդ հոդվածի (1)(բ) կետով(2011/92) :

Հանրության մասնակցության գործընթացը կազմակերպելիս պետք է հստակ սահմանվի, թե ինչ որոշումներ են ենթակա ընդունման, որ փուլում, այդ որոշումների իրավական հետևանքները, ինչպես նաև՝ որ մարմինն է պատասխանատու դրանց ընդունման համար: Սովորաբար ՇՄԱԳ վերջնական որոշումն ընդունվում է իրավասու մեկ մարմնի կողմից: Այնուամենայնիվ, թե՛ CRMA-ով և թե՛ ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվով նախատեսված է, որ որոշ ծրագրերի դեպքում միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտավորությունը կարող է առաջանալ միաժամանակ ԵՄ մի քանի դիրեկտիվների հիմքով: Այդպիսի դեպքերում ԵՄ անդամ պետությունները կարող են նախատեսել համակարգվող և/կամ համատեղ գործընթացներ՝ ինչպես սահմանված է ՇՄԱԳ դիրեկտիվի 2-րդ հոդվածում:

Համակարգված ընթացակարգի անհրաժեշտության դեպքում՝ *«Անդամ պետությունները պետք է ձգտեն համակարգել տվյալ ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության տարբեր առանձին գնահատումները, որոնք պահանջվում են ԵՄ համապատասխան օրենսդրությամբ, նշանակելով այս նպատակով իրավասու մարմին»*՝ ըստ նույն կարգավորիչ դրույթի: Հետևաբար, եթե գործընթացին ներգրավված են տարբեր մարմիններ՝ յուրաքանչյուրն իր իրավասությամբ (գործիմացությամբ) և պատասխանատվությամբ, ապա յուրաքանչյուրը

պատասխանատու է ՇՄԱԳ-ի իրեն վերաբերող մասի գնահատման համար: Այսպիսով, այդ մարմինների կողմից ընդունված ակտերի կապակցությամբ, եթե դրանք ներառված չեն ՇՄԱԳ եզրակացության մեջ, շահագրգիռ (ազդակիր) հանրության հայցի հիման վրա կարող է հարուցվել վարչական և դատական վարույթ:

Կարևոր է, որ հանրությանը տրամադրվի հնարավորություն մասնակցելու որոշումների կայացման գործընթացին յուրաքանչյուր փուլում, ինչպես նաև բոլոր այն գործընթացներում,<sup>67</sup> որոնք կարող են տարբերվել ՇՄԱԳ-ի հիմնական սահմանված ընթացակարգից: Մասնավորապես, ԵՄ Հաբիտատների դիրեկտիվը (EU Habitats Directive)<sup>68</sup> նախատեսում է, որ որոշ կենդանատեսակների կամ բուսատեսակների վտանգվածության կարգավիճակի փոփոխումը «նպաստավոր պահպանման» կարգավիճակի կարող է տեղի ունենալ շահագրգիռ հանրության հետ համապատասխան լուծումներ անցկացնելուց հետո միայն:

Նույն կերպ, ԵՄ Արդյունաբերական արտանետումների դիրեկտիվով (EU Industrial Emissions Directive)<sup>69</sup> պահանջվում է

---

<sup>67</sup> The [UNECE](https://unece.org/DAM/env/pp/documents/cep43e.pdf) Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters, page 13.

<https://unece.org/DAM/env/pp/documents/cep43e.pdf>

<sup>68</sup> Council Directive 92/43/EEC of 21 May 1992 on the conservation of natural habitats and of wild fauna and flora <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:01992L0043-20130701>

<sup>69</sup> Directive 2010/75/EU of the European Parliament and of the Council of 24 November 2010 on industrial and livestock rearing emissions (integrated pollution prevention and control) (Recast) (Text with EEA relevance) <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02010L0075-20240804>

երաշխավորել, որ իրավասու բոլոր պետական մարմինների կողմից արտանետումների թույլտվությունների տրամադրման գործընթացում կիրառվի արդյունավետ և միասնական մոտեցում: Շահագրգիռ հանրությունը, ներառյալ այն ՀԿ-ները, որոնք ջատագովում են մարդու առողջության կամ բնության պահպանությունը և համապատասխանում են ազգային օրենսդրությամբ սահմանված պահանջներին, պետք է համարվեն շահագրգիռ կողմ, որի հետ պետք է անցկացվեն լսումներ (խորհրդակցություն)՝ արտանետումների թույլտվություն տրամադրելու կամ դրա պայմանները սահմանելու որոշում ընդունելիս: Դրանց թվում են՝ կանանց կազմակերպությունները՝ հաշվի առնելով նրանց դերը առողջապահական և բնապահպանական խնդիրների առաջնորման գործում, ինչպես նաև այն փաստը, որ կանայք կարող են ենթարկվել արդյունաբերական արտանետումների առանձնահատուկ և անհամաչափ ազդեցությունների: Ավելին, նշված դիրեկտիվը սահմանում է, որ շահագրգիռ հանրությունը պետք է ունենա դատարան դիմելու և որոշման վերանայում հայցելու իրավունք:<sup>70</sup>

ԵՄ Ջրի դիրեկտիվը (EU Water Directive)<sup>71</sup> սահմանում է դրույթներ, որոնցով ապահովվում է լայն հանրության, այդ թվում՝ ջրօգտագործողների մասնակցությունը գետային

---

<sup>70</sup> European Parliament & Council. (2010, November 24). *Directive 2010/75/EU on industrial emissions (integrated pollution prevention and control)*. *Official Journal of the European Union*, L 334, 17–119. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32010L0075>

<sup>71</sup> Directive 2000/60/EC of the European Parliament and of the Council of 23 October 2000 establishing a framework for Community action in the field of water policy <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02000L0060-20141120>

ավագանների կառավարման պլանների մշակման և վերանայման գործընթացներին: Դիրեկտիվը նախատեսում է հանրությանը տրամադրել բավարար տեղեկատվություն պլանավորվող միջոցառումների վերաբերյալ, ինչպես նաև հաշվետվություններ դրանց իրականացման առաջընթացի մասին, որպեսզի հանրությունը ներգրավվի գործընթացում՝ նախքան անհրաժեշտ միջոցառումների վերաբերյալ վերջնական որոշումների ընդունումը: Այս նպատակով պետք է հստակ սահմանվի այն պետական իրավասու մարմինը,<sup>72</sup> որը պատասխանատու է ջրային ռեսուրսների պահպանման կանոնների կիրարկման համար և ապահովում է շահագրգիռ կողմերի մասնակցությունը՝ համայնքային ջրային քաղաքականության իրականացման վերաբերյալ դիտարկումներ և առաջարկություններ ներկայացնելու գործում: Շահագրգիռ կողմ կարող են հանդիսանալ հասարակական կազմակերպությունները, սոցիալական և տնտեսական գործընկերները, սպառողների (ջրօգտագործողների) կառույցները, գիտական շրջանակների ներկայացուցիչները և այլ փորձագետներ: Այս գործընթացը պետք է նաև ապահովի կանանց կազմակերպությունների և ներկայացուցիչների ճանաչումն ու ներգրավումը որպես շահագրգիռ կողմ՝ ընդունելով, որ կանայք կարող են անհամաչափորեն տուժել ջրի պակասից, աղտոտումից և կառավարման որոշումներից՝ պայմանավորված ջրի

---

<sup>72</sup> European Parliament & Council. (2000, October 23). *Directive 2000/60/EC establishing a framework for Community action in the field of water policy. Official Journal of the European Communities*, L 327, 1–73. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:32000L0060>

հավաքման և կենցաղային օգտագործման հարցում նրանց հիմնական դերակատարությամբ, առողջական բարձր ռիսկերով (ներառյալ՝ հղիության և դաշտանային ցիկլի ընթացքում), կենսապահովման համար ջրային ռեսուրսներից տնտեսական կախվածությամբ, հեռու կամ ոչ ապահով ջրի աղբյուրներ հասնելիս գենդերային բռնության ենթարկվելու վտանգով, ինչպես նաև ջրային կառավարման մարմիններից հաճախակի բացառված լինելու հանգամանքով:

Հանքարդյունահանող արդյունաբերության ոլորտում իրականացվող ռազմավարական ծրագրերի դեպքում, երբ միջավայրի վրա ազդեցության գնահատման պարտավորությունը առաջանում է միաժամանակ մի քանի ԵՄ դիրեկտիվների հիմքով, Կրիտիկական հանքահումքի մասին ակտով պահանջվում է, որ անդամ պետությունները ապահովեն համակարգված կամ համատեղ ընթացակարգի կիրառում՝ ԵՄ համապատասխան իրավական ակտերով սահմանված բոլոր պահանջների կատարմամբ: ՇՄԱԳ դիրեկտիվի 2-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ համատեղ ընթացակարգի շրջանակում ԵՄ անդամ պետությունը պետք է ձգտի համակարգել տվյալ ռազմավարական ծրագրի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության տարբեր առանձին գնահատումները և ապահովել դրա մեկ միասնական գնահատումը՝ ԵՄ համապատասխան իրավական ակտերով նախատեսված պահանջներին համապատասխան:<sup>73</sup> Բացի

---

<sup>73</sup> European Union. (2024, April 11). Regulation (EU) 2024/1252 of the European Parliament and of the Council establishing a framework for ensuring a secure and sustainable supply of

այդ, ԵՄ հանձնաժողովի ուղեցույցները սահմանում են երկու հնարավոր ընթացակարգ, որոնցով առանց բարդության իրականացվում են ՇՄԱԳ դիրեկտիվի 2-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներին ենթակա ծրագրերի ազդեցություններ գնահատումները, ինչպես նաև ԵՄ այլ վերաբերելի իրավական ակտերով նախատեսված գնահատումները:<sup>74</sup>

Համահունչ ՇՄԱԳ հիմնական ընթացակարգին՝ ԵՄ օրենսդրությունը նախատեսում է թույլտվությունների հատուկ ընթացակարգեր, որոնք ի կատար են ածվում այն իրավասու մարմինների կողմից, որոնք նշանակված են իրենց մասնագիտական ուղղվածության (կոմպետենցիայի) և պատասխանատվության դաշտում փորձաքննություններ իրականացնելու համար: Այս ընթացակարգերը ներառում են շահագրգիռ հանրության, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների մասնակցությունը որոշումների կայացմանը և նախատեսում են դատարանի միջոցով ընդունված որոշումները վիճարկելու հնարավորություն: Մինևույն ժամանակ, ՇՄԱԳ դիրեկտիվը թույլ է տալիս ՇՄԱԳ-երն ինտեգրել արդեն գոյություն ունեցող այն ընթացակարգերի մեջ, որոնք հաստատված են այլ դիրեկտիվների շրջանակներում և որոնք ուղղված չեն բացառապես ՇՄԱԳ-ի

---

critical raw materials and amending Regulations (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1724 and (EU) 2019/1020 (OJ L, 3 May 2024). CRMA, Article 11(1-4), see here: <https://eur-lex.europa.eu/eli/reg/2024/1252/oj/eng>

<sup>74</sup> Commission guidance document on streamlining environmental assessments conducted under Article 2(3) of the Environmental Impact Assessment Directive (Directive 2011/92/EU of the European Parliament and of the Council, as amended by Directive 2014/52/EU) (2016/C 273/01) [https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52016XC0727\(01\)](https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:52016XC0727(01))

իրականացմանը: Այդ ծրագրերի դեպքում, որոնց ազդեցության գնահատման պարտավորությունը առաջանում է միաժամանակ մի քանի դիրեկտիվներից, հնարավոր է կիրառել համակարգված և/կամ համատեղ ընթացակարգեր՝ իրականացնելով տվյալ ծրագրի՝ շրջակա միջավայրի ազդեցության միակ միասնական գնահատում: Այս կապակցությամբ ԵՄ հանձնաժողովը տրամադրում է ուղեցույցներ՝ համակարգված կամ համատեղ ընթացակարգերի ստեղծման համար այն ծրագրերի համար, որոնք միաժամանակ ենթակա են գնահատումների ինչպես ՇՄԱԳ դիրեկտիվի, այնպես էլ այլ ԵՄ դիրեկտիվների շրջանակներում:

ԵՄ դիրեկտիվների և ազգային օրենսդրության ընդունումը նույնքան կարևոր է, որքան դրանց արդյունավետ կիրարկումը: Կրիտիկական հանքահումքի արդյունահանման համատեքստում միջավայրի համար վնասակար գործողությունների անբավարար օրենսդրական կարգավորումն ու վերահսկումը կարող է հավասար լինել մարդու առողջության և այլ իրավունքների խախտման: Ինչպես արդեն նշվել է, ՄԱԿ-ի Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների հարցերով հանձնաժողովը կարևորում է այնպիսի ՇՄԱԳ գործընթացները, որոնք թափանցիկ են, հիմնված են գիտական մոտեցման վրա և ապահովում են հանրության վաղ և բովանդակալից մասնակցություն: ԵՄ և ներպետական օրենսդրությունները պետք է համահունչ լինեն այս միջազգային չափանիշներին

կամ գերազանցի դրանք: Սա հատկապես կարևոր է այն ՇՄԱԳ-երի համար, որոնք գնահատում են հանքարդյունահանման և հարակից արդյունաբերական գործունեության պատճառով առաջացած աղտոտումն ու ազդեցություններն առողջության վրա երկարաժամկետ կտրվածքում: Չնայած այն բանին, որ պետությունները տարբեր կերպ են ներառում միջազգային չափանիշները ներպետական օրենսդրության մեջ, բոլորն ունեն հիմնական պարտավորություն՝ ձեռնարկելու նպատակային քայլեր, որպեսզի անհատներն ու համայնքները, այդ թվում՝ լուսանցքավորված խմբերը, մասնակցեն իրենց կյանքի, առողջության և զարգացման հնարավորությունների վրա ազդող որոշումների ընդունման գործընթացներին: Կրիտիկական հանքահումքի համատեքստում սա նշանակում է, որ հանրության մասնակցությունը պետք է հանդիսանա ոչ միայն շրջակա միջավայրին վերաբերող առանձին դիրեկտիվների անբաժանելի մասը, այլ նաև մաս կազմի այն քաղաքականությունների, ծրագրերի և ռազմավարությունների, որոնք վերաբերում են արդար կանաչ անցմանը, ներառյալ՝ կրիտիկական հանքահումքին:

Հայաստանում համայնքի անդամները հաճախ են հիշատակում համայնքային զարգացման ծրագրերը, որոնք ընդունվում են համայնքի ավագանու կողմից յուրաքանչյուր 5 տարին մեկ, որոնցով էլ հիմնավորվում է համայնքի զարգացման ծրագրում արտացոլված տեսլականին

համահունչ հայտերի/դիմումների բավարարումը: Հանրագրերի մասին ՀՀ օրենքի համաձայն՝ Հայաստանի բազմաթիվ համայնքների բնակիչները կազմակերպել են ստորագրահավաքներ և դիմել են իրենց տեղական ինքնակառավարման մարմիններին՝ պահանջելով արգելել հանքարդյունաբերությունը իրենց համայնքի վարչական տարածքում և թույլատրել զարգացման միայն այն տնտեսական ճյուղերը, որոնք բարենպաստ են միջավայրի պահպանության համար:<sup>75</sup>

Վերջում ուզում ենք ասել, որ տեղական ինքնակառավարման մարմինները ունեն զգալի պատասխանատվություն և լիազորություններ՝ մասնակցելու և ազդելու որոշումների կայացման գործընթացի վրա, երբ իրենց վարչարարության տարածքում պլանավորվում է հանքարդյունաբերական գործունեություն: Տեղական ինքնակառավարման եվրոպական խարտիան,<sup>76</sup> մասնավորապես, սահմանում է մի շարք երաշխիքային մեխանիզմներ, որոնցով համայնքները կկարողանան պաշտպանել իրենց իրավունքները և կարողությունը՝ որոշելու իրենց սոցիալ-տնտեսական

<sup>75</sup> «Ջերմուկի ավազանին մերժեց ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարի առաջարկը՝ վերացնել համայնքի տարածքում մետաղական հանքարդյունաբերությունն արգելելու որոշումը», Էկոլուր տեղեկատվական հարթակ, <https://www.ecolor.org/hy/news/mining/jermuk-aldermens-council-rejected-proposal-of-armenian-government-to-abolish-resolution-on-banning-metallic-mining-in-community-area/10804/>

<sup>76</sup> Council of Europe. (2013). *European Charter of Local Self-Government* (reprinted 2016). <https://rm.coe.int/european-charter-for-local-self-government-english-version-pdf-a6-59-p/16807198a3>

զարգացման ուղղությունները: Տեղական ինքնակառավարման մարմինները համարվում են քաղաքացուն ամենամոտ իշխանությունների մակարդակը և, հետևաբար, պետք է ունենան իրենց առօրյա կյանքի և միջավայրի վրա ազդող որոշումների կայացմանն արդյունավետորեն մասնակցելու հնարավորություն:

## 5. Եզրափակիչ դիտարկումներ

Միջազգային պարտավորություններում խարսխված այս օրինակելի ուղենիշները ապահովում են նորմատիվ հիմքեր արդար կանաչ անցման համար: Կրիտիկական հանքահումքի հետ կապված գործողությունները պետք է հիմնված լինեն մարդու իրավունքների, միջավայրի անխաթարության և ժողովրդավարական մասնակցության վրա: Ուղենիշների բաղկացուցիչ մաս կազմող՝ կենսագործման սկզբունքներն ընդգծում են պետության ինստիտուտների դերը, որպեսզի դրանք ապահովեն՝ բաց և ներառական քաղաքացիական միջավայր (Սկզբունք 1), բնապահպան իրավապաշտպանների պաշտպանություն (Սկզբունք 2), տեղեկությունների պատշաճ ժամանակին (ողջամիտ ժամկետներում) հասանելիություն, ինչպես նաև ստեղծում (Սկզբունք 3), բնության պահպանության և հանրային շահի գերապատվությունը՝ մասնավոր կորպորատիվ շահին (Սկզբունք 4) և արդյունավետ մասնակցություն ու արդարադատության հասանելիություն (Սկզբունք 5): Այս սկզբունքները համահունչ են Օրհուսի կոնվենցիային և ԵՄ օրենսդրությանը, որոնց միջոցով դրանք նաև արտացոլված են կյանքի կոչող հստակ մեխանիզմներում:

ԵՄ ՇՄԱԳ դիրեկտիվը գործնական կիրառություն է տալիս վերոնշյալ սկզբունքներին՝ պահանջելով վաղ և արդյունավետ հանրային մասնակցություն «երբ որևէ որոշում ընդունված չէ, և բոլոր տարբերակները դեռևս բաց են» (Հոդված 6), շրջակա միջավայրի վերաբերյալ տեղեկատվության թափանցիկ

հասանելիություն թվային միջոցներով (Հոդվածներ 5 և 6), ինչպես նաև միջավայրի վերաբերյալ որոշումների վիճարկման նպատակով դատական վերանայման մեխանիզմների առկայություն (Հոդված 11): Այս համատեքստում՝ Ուղենիշ Ա-ն, բացելով 1-ին սկզբունքը, հուշում է՝ ինչպես կազմակերպել բաց և ներառական ծանուցման գործընթացներ կրիտիկական հանքահումքի ծրագրերի համատեքստում՝ համահունչ ԵՄ դիրեկտիվի՝ հանրային լուսման պահանջներին: Ուղենիշ Բ-ն, որը բխում է 3-րդ սկզբունքից, ներկայացնում է ցուցումներ՝ ինչպես ի կատար ածել դիրեկտիվի այն պահանջը, որը նախատեսում է բավարար ժամանակ (ոչ պակաս, քան 30 օր) հանրության դիտարկումները ստանալու համար և միաժամանակ ապահովել խոցելի և լուսանցքավորված խմբերի հավասար մասնակցությունը: Ուղենիշ Գ-ն, որը կապված է 5-րդ սկզբունքի հետ, նախատեսում է հանրության վաղ մասնակցություն և ազատ, նախապես ու տեղեկացված համաձայնության ստացում՝ նախքան հետախուզական կամ հանքարդյունաբերական լիցենզիաների տրամադրումը: Ուղենիշ Դ-ն, որը համապատասխանում է 2-րդ սկզբունքին, հիմնված է ԵՄ այն պարտավորությունների վրա, որոնք ուղղված են քաղաքացիական մասնակցության ապահովմանը՝ պահանջելով անվտանգ և թափանցիկ մեխանիզմներ հանրային կարծիքի հավաքագրման և ներառման համար, ինչը հատկապես կարևոր է Կրիտիկական հանքահումքի մասին ակտով ռազմավարական ճանաչված ծրագրերի համատեքստում, որտեղ հանրության մասնակցությունը

ներկայումս սահմանափակ է: Վերջապես, Ուղենիշ Ե-ն, որը բխում է 4-րդ սկզբունքից, արտացոլում է ՇՄԱԳ դիրեկտիվի 8-րդ հոդվածի ա) կետի դրույթները՝ պարտավորեցնելով իշխանություններին հրապարակել որոշումների հիմնավորումները, ցույց տալ՝ ինչպես է հանրային կարծիքը հաշվի առնվել և ապահովել որոշումների վերանայման ընթացակարգերի հասանելիություն այն դեպքերում, երբ խախտվել են մասնակցության կամ իրավունքների ապահովման պահանջները:

Հանրության մասնակցության հետ կապված իրավունքների հարգումը, պաշտպանությունն ու իրացումը արդար կանաչ անցման համատեքստում ոչ թե ընտրովի հարց է, այլ միջազգային իրավունքի պարտավորություն: Այն երաշխավորում է, որ էներգետիկ անցման համար կրիտիկական հանքահումքի արդյունահանումը չկատարվի մարդու իրավունքների, հասարակական համերաշխության կամ էկոլոգիական անխաթարության հաշվին: Հանրության մասնակցությունը արդար անցման առանցքն է. այն փոխակերպում է դեպի ցածրածխածնային և ռեսուրսարդյունավետ տնտեսություններ անցում կատարելու տեխնոլոգիատական գործընթացը ժողովրդավարական ծրագրի՝ հիմնված մարդու իրավունքների, հավասարության և մոլորակի նկատմամբ համընդհանուր հոգատարության վրա: Կենսագործման մեր առաջարկած սկզբունքների վերածումը գործնական ընթացակարգային երաշխիքների հնարավորություն է տալիս, որ պետությունները միջավայրի

վրա ազդող որոշումների կայացումը համահունչ դարձնեն արդարության և կենսակայունության պահանջներին: Բովանդակալից մասնակցությունը, որը հիմնված պետք է լինի միջազգային մարդու իրավունքների ստանդարտներին համապատասխանող տեղական գործընթացների վրա, հզորացնում է իրավատերերին (իրավունքների կրողներին): Նրանք կարողանում են որոշել, թե ինչպես պետք է տնօրինվի կրիտիկական հանքահումքը, ամենամեծ ազդեցությունը կրողները չեն լինում պասիվ դիտորդներ, այլ իրենք են կառուցում արդար անցումը: Պահպանելով թափանցիկության, ներառական լսումների և ազատ, նախապես ու տեղեկացված համաձայնության ստանալու սկզբունքները՝ հասարակությունները կարող են հավասարակշռել ածխածնի արտանետումների կրճատման հրատապությունը մարդու արժանապատվության ու միջավայրի անխաթարության պաշտպանության հետ: Որոշումների կայացման յուրաքանչյուր փուլում մասնակցությունը խստիվ ապահովելը հնարավորություն է տալիս արդար անցման խոստումը վերածելու իրականության՝ կառուցելով տնտեսություններ, որոնք ոչ միայն ավելի կանաչ են, այլև ավելի արդար, հաշվետու և հիմնավորապես ժողովրդավարական:

- Aarhus regulation, (No 1367/2006, *Request for Internal Review of designation the Strategic Projects*) <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/HTML/?uri=CELEX:32006R1367>
- Boyd, D. (2020), *Report of the Special Rapporteur on the Issue of Human Rights Obligations Relating to the Enjoyment of a Safe, Clean, Healthy and Sustainable Environment*, UN Doc A/75/161 (15 July 2020) [CEDAW/C/GC/37](https://www.unhcr.org/refugees/cerda/cerda-37.html)
- CESCR General Comment No. 14: *The Right to the Highest Attainable Standard of Health (Art. 12) (2000) Office of the High Commissioner of Human Rights*: <https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Women/WRGS/Health/GC14.pdf>
- Committee on the Elimination of Discrimination against Women. (2018, February 7). *General recommendation No. 37: Gender-related dimensions of disaster risk reduction in the context of climate change (CEDAW/C/GC/37)*. United Nations. [https://academy.ishr.ch/upload/resources\\_and\\_tools/CEDAW%20general%20recommendation%2037\\_en.pdf](https://academy.ishr.ch/upload/resources_and_tools/CEDAW%20general%20recommendation%2037_en.pdf)
- Compliance Committee on communication (ACCC/C/2008/24) *concerning compliance by Spain* <https://unece.org/acccc200824-spain>
- Council Directive (92/43/EEC of 21 May 1992) *on the conservation of natural habitats and of wild fauna and flora* <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:01992L0043-20130701>
- Council of Europe. (2013). *European Charter of Local Self-Government (reprinted 2016)*. [https://rm.coe.int/european-](https://rm.coe.int/european-charter-of-local-self-government)

[charter-for-local-self-government-english-version-pdf-a6-59-p/16807198a3](#)

CESCR General Comment No. 14: The Right to the Highest Attainable Standard of Health (Art. 12) (2000) Office of the High Commissioner of Human Rights:  
<https://www.ohchr.org/sites/default/files/Documents/Issues/Women/WRGS/Health/GC14.pdf>

Directive (2000/60/EC) of the European Parliament and of the Council of 23 October 2000 establishing a framework for Community action in the field of water policy <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02000L0060-20141120>

Directive (2010/75/EU) of the European Parliament and of the Council of 24 November 2010 on industrial and livestock rearing emissions (integrated pollution prevention and control) (Recast) (Text with EEA relevance) <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02010L0075-20240804>

Directive (2014/52/EU) of the European Parliament and of the Council of 16 April 2014 amending Directive 2011/92/EU on the assessment of the effects of certain public and private projects on the environment Text with EEA relevance <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0052>

Directive (2014/52/EU) of the European Parliament and of the Council of 16 April 2014 amending Directive 2011/92/EU on the assessment of the effects of certain public and private projects on the environment Text with EEA relevance, Article 3 <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/PDF/?uri=CELEX:32014L0052>

EBRD, (2024) *Environmental and Social Requirements*:  
<https://www.ebrd.com/home/news-and-events/publications/institutional-documents/environmental-and-social-policy-2024.html#>

- European Parliament & Council. (2011, December 13). Directive 2011/92/EU on the assessment of the effects of certain public and private projects on the environment (codified version). Official Journal of the European Union, L 26, 1–21. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:02011L0092-20140515> European Commission, *Environmental Impact Assessment, Guidance documents* [https://environment.ec.europa.eu/law-and-governance/environmental-assessments/environmental-impact-assessment\\_en](https://environment.ec.europa.eu/law-and-governance/environmental-assessments/environmental-impact-assessment_en)
- European Commission (2014–2020) *Guide to Cost-Benefit Analysis of Investment Projects, Economic appraisal tool for cohesion policy* [https://ec.europa.eu/regional\\_policy/sources/studies/cba\\_guide.pdf](https://ec.europa.eu/regional_policy/sources/studies/cba_guide.pdf)
- European Parliament & Council. (2011, December 13). *Directive 2011/92/EU on the assessment of the effects of certain public and private projects on the environment (codified version, as amended)*. Official Journal of the European Union, L 26, 1. <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:02011L0092-20140515>
- European Union. (1992, May 21). *Council Directive 92/43/EEC on the conservation of natural habitats and of wild fauna and flora*. Official Journal of the European Communities, L 206, 7–50. <https://eur-lex.europa.eu/eli/dir/1992/43/oj/eng>
- European Union. (2000, December 22). *Directive 2000/60/EC of the European Parliament and of the Council of 23 October 2000 establishing a framework for Community action in the field of water policy*. Official Journal of the European Communities, L 327, 1–73. <https://eur-lex.europa.eu/eli/dir/2000/60/oj/eng>
- European Union. (2010, December 17). *Directive 2010/75/EU of the European Parliament and of the Council of 24 November 2010 on industrial emissions (integrated pollution prevention and*

- control) (recast). *Official Journal of the European Union*, L 334, 17–119. <https://eur-lex.europa.eu/eli/dir/2010/75/oj/eng>
- European Union. (2024, April 11). *Regulation (EU) 2024/1252 of the European Parliament and of the Council establishing a framework for ensuring a secure and sustainable supply of critical raw materials and amending Regulations (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1724 and (EU) 2019/1020 (OJ L, 3 May 2024)*. CRMA, Article 11(1-4), see here: <https://eur-lex.europa.eu/eli/reg/2024/1252/oj/eng>
- Futhazar, G., Maljean-Dubois, S., Razzaque, J. (2022) *Biodiversity Litigation: Review of Trends and Challenges in Futhazar, G., Maljean-Dubois, S., Razzaque, J. (eds), Biodiversity Litigation, London, UK: Oxford University Press, pp. 359-400*
- General Comment 26 (2023) *Convention on the Rights of the Child*, available at, <https://www.ohchr.org/en/documents/general-comments-and-recommendations/crc/cgc26-general-comment-no-26-2023-childrens-rights>
- International Covenant on Civil and Political Rights, (16 December 1966), into force 23 March 1976, 999 UNTS 171
- International Covenant on Economic, Social and Cultural Rights (1966) *General Assembly resolution 2200A (XXI)*: <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/international-covenant-economic-social-and-cultural-rights>
- International Covenant on Economic, Social and Cultural Rights, (16 December 1966), into force 3 January 1976, 993 UNTS 3
- International Labour Organization Convention Concerning Indigenous and Tribal Peoples in Independent Countries, (27 June 1989), into force 5 September 1991, 28 ILM 1382
- Khan, I. (2023), *Sustainable development and freedom of expression: why voice matters –Report of the Special Rapporteur on the promotion and protection of the right to freedom of opinion and expression, A/HRC/53/25, (19 April 2023)* available at: <https://www.ohchr.org/en/documents/thematic->

- [reports/ahrc5325-sustainable-development-and-freedom-expression-why-voice.html](#) (accessed on 16 October, 2023)
- Knox J. (2017), *UNHRC ‘Report by Special Rapporteur on the Issue of Human Rights Obligations Relating to the Enjoyment of a Safe, Clean, Healthy and Sustainable Environment’ highlights that international human rights law recognises that every human being has the human rights to what the Millennium Ecosystem Assessment identifies as constituents of wellbeing. A/HRC/34/49, (19 January, 2017); available at: <https://www.ohchr.org/en/documents/thematic-reports/ahrc3449-report-special-rapporteur-issue-human-rights-obligations.html> (accessed on 16 October, 2023)*
- Law on (adopted on 21 June 2014)“*Environmental Impact Assessment and Expertise*”, , as amended on 03 May 2023 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=178468>
- Letsas, G. (2012) *The ECHR as a Living Instrument: Its Meaning and its Legitimacy*, SSRN. see: <http://dx.doi.org/10.2139/ssrn.2021836>
- [Microsoft Word - References to indigenous women CEDAW General Rec. 34](#)
- OECD Due Diligence Guidance for Meaningful Stakeholder Engagement in the Extractive Sector <https://mneguidelines.oecd.org/stakeholder-engagement-extractive-industries.htm>
- OHCHR (n/d) ‘Key concepts on ESCRs - Are economic, social and cultural rights fundamentally different from civil and political rights?’; Parr 3, available at <https://www.ohchr.org/en/human-rights/economic-social-cultural-rights/escr-vs-civil-political-rights>
- Regulation (EU) (2024/1252) *of the European Parliament and of the Council of 11 April 2024 establishing a framework for ensuring a secure and sustainable supply of critical raw materials and amending Regulations (EU) No 168/2013, (EU) 2018/858, (EU) 2018/1724 and (EU) 2019/1020 (Text with*

EEA relevance) <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A02024R1252-20240503>

Resolution adopted by the General Assembly (on 18 December 2013) *[on the report of the Third Committee (A/68/456/Add.2)] 68/181. Promotion of the Declaration on the Right and Responsibility of Individuals, Groups and Organs of Society to Promote and Protect Universally Recognized Human Rights and Fundamental Freedoms:*

Savaresi, A. et al (2019) *Climate Change Litigation and Human Rights: Pushing the Boundaries*, 9:3, *Climate Law*, pp. 244-262.

Suzanne Egan, (2018) 'The doctrinal approach in international human rights law scholarship' in McConnell, L. and Smith, R. *Research Methods in Human Rights*. London and New York: Routledge

The Committee on the Convention on the Elimination of All Forms of Discrimination against Women also adopted General Recommendation No. 34 that does a thorough review and interpretation of the Convention regarding the rights of rural women.

The [UNECE](#) Convention on Access to Information, Public Participation in Decision-making and Access to Justice in Environmental Matters, page 13.

<https://unece.org/DAM/env/pp/documents/cep43e.pdf>

UNECE, (on 25 June 1998) *Convention on Access to Information, Public Participation in Decision-Making and Access to Justice in Environmental Matters*”, done at Aarhus, Denmark: <https://unece.org/environment-policy/public-participation/aarhus-convention/text>

United Nations (1992) *UN Framework Convention on Climate Change*, see here:

[https://unfccc.int/files/essential\\_background/background\\_publications\\_htmlpdf/application/pdf/conveng.pdf](https://unfccc.int/files/essential_background/background_publications_htmlpdf/application/pdf/conveng.pdf)

United Nations (1993) *Convention on Biological Diversity*, see here: <https://www.cbd.int/convention/text>

- United Nations (2015) *Paris Agreement*, see here:  
<https://unfccc.int/process-and-meetings/the-paris-agreement>
- United Nations Human Rights Office of the High Commissioner (2025) *Environmental impact assessments, strategic environmental impact assessments and the right to a clean, healthy and sustainable environment*, see:  
<https://www.ohchr.org/en/calls-for-input/2025/environmental-impact-assessments-strategic-environmental-impact-assessments>
- United Nations Human Rights Special Procedures (2018) *Framework Principles on Human Rights and the Environment*, see:  
<https://www.unep.org/resources/policy-and-strategy/framework-principles-human-rights-and-environment>
- United Nations Economic Commission for Europe. (2015). Maastricht recommendations on promoting effective public participation in decision-making in environmental matters (ECE/MP.PP/10 – ECE/MP.EIA/SEA/5).  
[https://unece.org/sites/default/files/2022-10/1514364\\_E\\_web.pdf](https://unece.org/sites/default/files/2022-10/1514364_E_web.pdf)

